Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ 2020

ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՀԻՄՔԵՐ

Հայաստանի Հանրապետության
Ֆինանսների նախարարություն

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՅՈՒՋԵ 2020
ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույն փաստաթուղթը մշակել է ՀՀ ֆինանսների նախարարության հանձնարարությամբ՝ Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի կողմից «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ամբողջական ներդրման ռազմավարության իրականացմանը» խորհրդատվական աշխատանքների շրջանակներում, որն իրականացվում է Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերությունը (ԳՄՀԸ) աջակցությամբ:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել՝

- *ՀՀ ֆինանսների նախարարության՝*
  +374 (0) 11 800 156, secretariat@minfin.am www.minfin.am
- *Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)՝*
  +374 (0) 55 540 289, info@edrc.am www.edrc.am

ՀՀ ֆինանսների նախարարությունը խրախուսում է «Քաղաքացու Բյուջե 2020-ի» տարածումը՝
հանրության լայն շերտերին հասանելի դարձնելու նպատակով:
Փաստաթղթից օգտվելիս պատշաճ հղումը պարտադիր է:

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

ECONOMIC DEVELOPMENT RESEARCH CENTER
EDRC

ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վերջին երկու տարում Հայաստանում զգալի առաջընթաց է գրանցվել հանրային ֆինանսների կառավարման և մասնավորապես բյուջետավորման բարեփոխումների առումով: «Ծրագրային բյուջետավորման» ձևաչափի ներդրումը էականորեն փոխում է «պետական բյուջե» փաստաթուղթը և բյուջեների մշակման, կատարման, հաշվետվության և գնահատման էությունը՝ նոր հորիզոններ բացելով դրանց զարգացման և արդյունավետության համար: Սակայն բարեփոխումները կմնան չընկալված և անօգուտ, եթե տարբեր շահագրգիռ կողմերը և դերակատարները, թե՛ պետական համակարգի ներսում, և թե՛ հասարկությունում չկատարեն համարժեք քայլ-առաջ՝ պետական բյուջեն կարդալու, հասկանալու, քաղաքականության և ծախսային ծրագրերի նպատակներն առանձնացնելու, արդյունքների արդյունավետության մշտադիտարման և գնահատման առումներով:

Ֆինանսական և բյուջետային գրագիտության պատշաճ մակարդակը, ինչպես նաև բյուջետային գործընթացի տարբեր փուլերին շահագրգիռ կողմերի արդյունավետ մասնակցության պակասը դեռևս շարունակում են մնալ գործընթացի հիմնական բացերը: Կարևոր է բյուջետային գործընթացի տարբեր մասնակիցների դերերի և պարտա-կանությունների հստակեցումը, հատկապես քաղաքացիական հասարակության տարբեր կառույցների և քաղաքացու դերակատարության գիտակցումը և կարևորումը, մասնակցության ընդլայնումը:

Այս առումով, ՀՀ ֆինանսների նախարարությունը ձեռնամուխ է եղել մասնակցային բյուջետավորման ինստիտու-ցիոնալ և նորմատիվային շրջանակի ձևավորմանը և ներդրմանը: «Քաղաքացու բյուջեն» այս տրամաբանության շրջանակներում ձեռնարկված հաջորդ նախաձեռնությունն է: Նախկինում ևս, ՀՀ ֆինանսների նախարարությունը բյուջետային տեղեկատվության պարզեցման փորձեր է իրականացրել: Սակայն տվյալ դեպքում խնդիրը որակապես փոխվել է. նախ փորձ է արվում բյուջեն իսկապես դարձնել առավել հասկանալի՝ որպես կառավարության ծրագրերը և ակնկալվող արդյունքները նկարագրող պարզ փաստաթուղթ, ապա նաև՝ տեղակատվական հենք հանրային մասնակցության ընդլայնման համար:

Փաստաթուղթը մշակվել է «Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոնի» կողմից, որը տարիներ ի վեր մասնագիտացել է ոչպետական հատվածի կողմից բյուջետային ծրագրերի վերլուծության և գնահատման աշխա-տանքներում: Նախաձեռնությունը իրականացվել է «Աջակցություն ՀՀ ֆինանսների նախարարությանը Հայաստանում Ծրագրային բյուջետավորման համակարգի ամբողջական ներդրման ռազմավարության իրականացման» առաջադրանքի շրջանակներում:

Քաղաքացու բյուջեի հրապարակումը յուրահատուկ փորձ և հնարավորություն է նաև պետական մարմինների համար՝ հստակեցնելու և հանրայնացնելու իրենց կողմից իրականացվող քաղաքականության և ծրագրերի արդ-յունքները, դառնալու ավելի հրապարակային և հաշվետու ՀՀ քաղաքացուն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ.
ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՀԻՄՔԵՐ 1

► Մակրոտնտեսական հեռանկար 1
► Ծախսային գերակայություններ 2

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ 4

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ 5

ԴԵՖԻՑԻՏ 8

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ 9

ԾԱԽՍԵՐ 12

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ.
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ 19

► Սոցիալական պաշտպանություն 20
► Առողջապահություն 28
► Կրթություն և գիտություն 34
► Մշակույթ, սպորտ, երիտասարդություն 40
► Միգրացիա 45
► Հեռուստատեսություն և ռադիո 47
► Ներդրումներ և տնտեսական զարգացում 49
► Բարձր տեխնոլոգիական արդյունաբերություն 54
► Տարածքային կառավարում 58
► Ենթակառուցվածքների զարգացում 63
► Գյուղատնտեսություն 71
► Շրջակա միջավայրի պաշտպանություն 77
► Հասարակական կարգ և անվտանգություն 81
► Արդարադատություն և դատական գործունեություն 88
► Արտաքին քաղաքականություն 91
► Սփյուռք 93
► Պետական ֆինանսների կառավարում 96
► Հանրային կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար 99

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ 103

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 106

ԾԱԽՍԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐԸ. ՆԵՐԱՌԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՀԻՄՔԵՐ

Մակրոտնտեսական հեռանկար

- Պետական բյուջեն կառավարության տարբեր քաղաքականություններն ամփոփող կարևոր ծրագրային փաստաթուղթ է, որն արտահայտում է, թե կառավարությունը հանրային ռեսուրսները ինչպե՞ս է նախատեսում օգտագործել, ո՞ր քաղաքական նպատակների համար, ինչպիսի՞ հանրային ծառայություններ և ի՞նչ ծավալով են մատուցվելու, և ի վերջո, ինչպիսի՞ արդյունքներ են ապահովվելու հանրության համար:

- Պետական բյուջեն նախ և առաջ արտահայտում է հարկաբյուջետային քաղաքականությունը, որը կարող է համարվել արդյունավետ, եթե ապահովվում է հանրային միջոցների այնպիսի բաշխման և վերաբաշխման համակարգ, որը մի կողմից կերաշխավորի տնտեսության զարգացումը, մյուս կողմից՝ սոցիալական և անվտանգային կարիքների արդյունավետ հասցեագրումը:

- Հայտնի է, որ կառավարության հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղակիորեն ազդում է մակրոտնտեսական միջավայրի վրա, իսկ մյուս կողմից՝ տնտեսական զարգացումներն, իրենց հերթին, մեծ ազդեցություն ունեն կառավարության ֆինանսների վրա: Տնտեսական աճն ապահովում է տնտեսությունում ավելի մեծ եկամուտներ՝ հետևաբար հարկային եկամուտների աճ: Մինչդեռ, տնտեսական իրավիճակի վատթարացումը կարող է հանգեցնել հարկերի կրճատման, միաժամանակ՝ կառավարության սոցիալական ծախսերի պահանջի ընդլայնման և ֆինանսական բեռի ծանրացման:

- 2020 թվականի հարկաբյուջետային շրջանակը հիմնվում է 4.9 տոկոս[1] տնտեսական աճի կանխատեսման վրա: Ընդհանուր առմամբ, 2020-ին հարկաբյուջետային քաղաքականությունը կլինի ընդլայնողական՝ խթանելով ամբողջական պահանջարկի աճը:

- Պետական բյուջեի ծախսերը 2020-ին՝ 2019-ի պլանային ցուցանիշի համեմատ կաճեն 12.6 տոկոսով: Ընդհանուր ծախսերի մոտ 16 տոկոսը կուղղվի կապիտալ ներդրումներին, որոնք նախորդ տարվա պլանային մակարդակը կգերազանցեն 29.6 տոկոսով: Պետական բյուջեի ընդհանուր դեֆիցիտը (պակասուրդը), որն ըստ էության արտահայտում է կառավարության կողմից տնտեսություն ներմղված (պետական բյուջեի ծախսեր) և տնտեսությունից արտաքաշված (պետական բյուջեի եկամուտներ) միջոցների տարբերությունը, կկազմի ծրագրային ՀՆԱ-ի 2.3 տոկոսը:

- Ծրագրված է սպառողական շուկաներում գնաճի կայուն և ցածր մակարդակ: 2020-ին սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) կաճի 2.5 տոկոսով և կմնա ՀՀ ԿԲ նպատակային թիրախի 4 (+/-1.5) տոկոս միջակայքի ստորին սահմանում:

- Ապրանքների և ծառայությունների արտահանումը ներմուծման համեմատ կունենա առաջանցիկ աճի տեմպ, իսկ դրամական փոխանցումների աճը կվերականգնվի: Արդյունքում, 2020 թվականին արտաքին ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ի նկատմամբ կկրճատվի:

Աղյուսակ 1. ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԻՄՔՈՒՄ ԴՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ, տոկոս

Չափորոշիչ	2016 փաստ.	2017 փաստ.	2018 փաստ.	2019 կանխ.	2020 կանխ.
Տնտեսական աճ	0.2	7.5	5.2	6.3	4.9
Ներդրում/ՀՆԱ	18.0	19.3	22.4	22.3	22.6
Սպառում/ՀՆԱ	90.8	92.3	92.7	93.3	92.5
ՀՆԱ դեֆլյատոր	0.3	2.2	2.5	2.9	3.0
Գնաճ միջին	-1.1	1.0	2.5	1.7	2.1
Գնաճ 12-ամսյա	-1.4	2.6	1.8	2.0	2.5
Պետական բյուջեի պակասուրդ/ՀՆԱ	-5.5	-4.8	-1.8	-0.6	-2.3
Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ	-2.1	-3.0	-9.4	-7.0	-6.0

[1]Տնտեսական աճի կանխատեսումներում հաշվի են առնվել ընթացիկ զարգացումները, ինչպես նաև գործընկեր երկրների տնտեսական աճերի և հումքային ապրանքների գների զարգացման միտումները:

Ծախսային գերակայություններ

- 2020-ի պետական բյուջեն ուղղված է **ներառականության և կայուն աճի հիմքերի ձևավորմանը**: Բյուջետային ծախսերի աճի գերակշիռ մասն ուղղվելու է տնտեսական և սոցիալական բնույթի ծրագրերին: Մասնավորապես, այս ոլորտներին կուղղվեն ծախսերի աճի ավելի քան 85 տոկոսը:

- Նպատակ ունենալով մրցակցային տնտեսության զարգացումը և հանրային միջոցների արդար բաշխումը՝ կառավարությունը դրա իրագործումը տեսնում է միայն ամուր տնտեսական հենքի ձևավորմամբ: Տնտեսության զարգացման ծրագրերում ուշադրության կենտրոնում են տնտեսական աճի խթանումը, տնտեսության մրցունակության բարձրացումը՝ բոլոր տնտեսավարողների համար բարենպաստ և հավասար տնտեսական պայմանների ապահովման, գործարար և ներդրումային միջավայրի շարունակական բարելավման, ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացման միջոցով:

- Կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր, որին հասնելու ուղիներից է համարում տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

- Գյուղատնտեսությունը և տուրիզմը ևս տնտեսության զարգացման գերակա ուղղություններ են: Կառավարությունը կարևորում է երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացումը, գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացումը, գյուղատնտեսական ամբողջ արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների եկամուտների ավելացումը:

- Մեծածավալ ռեսուրսներ կուղղվեն հանրապետության ենթակառուցվածքների բարելավմանը և զարգացմանը: Մասնավորապես, ճանապարհային ցանցի բարելավումների և ոռոգման համակարգի առողջացման նպատակներով նախատեսված ռեսուրսները նախորդ տարվա համեմատ գրեթե կկրկնապատկվեն:

- Սոցիալական պաշտպանության ոլորտում քաղաքականությունն ուղղված է կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի բարձրացմանը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը խրախուսող աջակցությանը, զբաղվածության և բնակարանային ապահովման խնդիրների լուծմանը:

- 2020թ. բյուջեի հիմքում դրված է կենսաթոշակների միջինում 10 տոկոս և նվազագույն աշխատավարձի 13,000 դրամով աճը: Աճում են ինչպես մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի, այնպես էլ ծննդյան միանվագ նպաստի չափերը: Միջոցներ են նախատեսվել երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությանը: 2020-ին կառավարությունը ամբողջությամբ կմարի երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման պետական պարտավորությունները:

- Կառավարությունը մեծացնում է ներդրումները սոցիալապես անապահով և խոցելի բնակչության կյանքի որակի բարելավման ուղղությամբ: Սոցիալական գրեթե բոլոր բնագավառներն աչքի են ընկնում սոցիալապես անապահով խմբերին մատուցվող ծառայությունների շրջանակի, ընդգրկման և հասանելիության աճով: Կիրականացվեն նաև զբաղվածության և տնտեսական մասնակցության հնարավորությունների ընդլայնման ծրագրեր:

- Առողջապահական ծրագրերին ուղղվող միջոցները կտրուկ աճում են: Այսուհետ պետական հոգածության տակ են մինչև 18 տարեկան բոլոր երեխաների բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները: Ընդլայնվում է սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայությունների շրջանակը, ուռուցքաբանական բժշկական օգնության ծառայությունների շրջանակը, դեղապահովման շրջանակը: Կմատուցվեն բժշկական օգնության մի շարք նոր ծառայություններ:

- Զգալիորեն աճում են հատկապես հանրակրթությանն ուղղվող միջոցները: Կարևորվում է կրթության ընդգրկման և որակի բարելավումը, ուսուցիչների որակավորման և եկամուտների բարձրացումը, ժամանակակից ուսումնական միջավայրի ստեղծումը: Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրումը ոլորտի գերակայություններից է, և արդեն 2021թ. առանձնահատուկ կարիք ունեցող բոլոր երեխաները կընդգրկվեն հանրակրթական դպրոցներում: Կառավարությունը ավելացնում է ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների վարձավճարների փոխհատուցման ուղղվող միջոցները, մասնավորապես՝ խոցելի, սոցիալապես անապահով և սահմանամերձ համայնքների ընտանիքների ուսանողներինը:

Գծապատկեր 1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ



ՀԻՇԵՆՔ՝ Այն քաղաքացիները և գործարարները, ովքեր ժամանակին և ճշգրիտ կատարում են հարկերի վճարման իրենց պարտականությունները, աջակցում են կառավարությանը ներառական աճ ապահովելու հարցում:

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ

- Պետական բյուջեն պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն ներառում է պետական եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը: Որպես քաղաքականության կարևոր փաստաթուղթ, բյուջեն ցույց է տալիս տնտեսության վրա պետության ազդեցության բնույթը և չափը: Այն ցույց է տալիս, թե կառավարությունը, օգտագործելով հասարակական ռեսուրսները, ինչպես է ծրագրում իրագործել քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում:
- ՀՀ 2020 թվականի պետական բյուջեն հաստատվել է եկամուտների գծով 1,695.0 մլրդ դրամ, ծախսերի գծով 1,855.7 մլրդ դրամ և դեֆիցիտի գծով 160.7 մլրդ դրամ, որոնք նախորդ տարվա նույն ցուցանիշների համեմատությամբ աճել են համապատասխանաբար 13.3; 12.6 և 6 տոկոսով:

Գծապատկեր 2. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը, 2019 և 2020 թվականներ, մլրդ. դրամ



- Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը կազմում են ՀՆԱ-ի համապատասխանաբար 23.9; 26.2 և 2.3 տոկոսը:

Գծապատկեր 3. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը, ՀՆԱ-ի նկատմամբ տոկոս, 2015-2020 թվականներ[1]



[1] 2015-2018թթ.՝ ցուցանիշների փաստացի մակարդակներ, 2019 և 2020թթ.՝ համապատասխան տարվա պետական բյուջեի մասին օրենքով հաստատված մակարդակներ:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

- Պետական ծրագրերը ֆինանսավորվում են տնտեսությունից՝ քաղաքացիներից և բիզնեսից հավաքագրված հարկային և այլ եկամուտների հաշվին:
- Հարկային վարչարարության բարեփոխումների, ստվերի և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների արդյունքում բյուջեի եկամուտները 2020-ին կշարունակեն աճել և կկազմեն 1,695.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա ծրագրված մակարդակի համեմատ աճելով 198.5 մլրդ դրամով կամ 13.3 տոկոսով: 2019-ի ճշտված մակարդակի համեմատ աճը կկազմի 128 մլրդ դրամ կամ 8.2 տոկոս:

Գծապատկեր 4. ՀՀ պետական բյուջեի եկամուտները, 2018 - 2020 թվականներ, մլրդ դրամ



*2019թ. ճշգրտված մակարդակ

- Հարկային եկամուտները և տուրքերը ՀՀ պետական բյուջեի եկամուտների ձևավորման հիմնական աղբյուրն են և 2020թ. կկազմեն ընդամենը բյուջեի եկամուտների 94.5 տոկոսը:
- Պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները համապատասխանաբար կապահովեն տարեկան բյուջետային եկամուտների 2.1 տոկոսը և 3 տոկոսը:

Գծապատկեր 5. ՀՀ պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը, 2019 և 2020 թվականներ, տոկոս



Ներդիր 1. ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2020 թվականի հունվարի 1-ից Հայաստանում ուժի մեջ կմտնեն հարկման համակարգի մի շարք փոփոխություններ.

Եկամտային հարկը *աստիճանաբար նվազեցվելու է 20 տոկոս դրույքաչափի՝*

- *2020թ. Հունվարի 1-ից՝ 23 տոկոս,*
- *2021թ. Հունվարի 1-ից՝ 22 տոկոս,*
- *2022թ. Հունվարի 1-ից՝ 21 տոկոս,*
- *2023թ. Հունվարի 1-ից՝ 20 տոկոս:*

Նախատեսվում է ***կենսաթոշակային վճարի*** *դրույքաչափի վերականգնում 2.5 տոկոսից՝ նախկինում կիրառվող 5 տոկոսի մակարդակում՝*

- *2021թ. հունվարի 1-ից՝ 3.5 տոկոս,*
- *2022թ. հունվարի 1-ից՝ 4.5 տոկոս,*
- *2023թ. հունվարի 1-ից՝ 5 տոկոս:*

2020թ. հուլիսի 1-ից էլ կփոխվի կենսաթոշակային վճարը հաշվարկելու առավելագույն շեմը:

Շահութահարկի *դրույքաչափը 20 տոկոսից նվազեցվել է մինչև 18 տոկոս:*

Ավելացված արժեքի հարկի *շեմը 58.35 մլն դրամից բարձրացվել և վերականգնվել է մինչև 2019թ. հունվարի 1-ը գործող՝ 115 մլն դրամի մակարդակը (այդ թվում՝ 2019թ. համար):*

Բարձրացվել են էթիլային սպիրտի, օղու, գարեջրի և IQOS տեխնոլոգիայով ծխախոտի արտադրանքի մասով ***ակցիզային հարկի*** *դրույքաչափերը, սահմանվել է, որ ակցիզային հարկի հաստատուն դրույքաչափերը տարեկան 3 տոկոսով բարձրանալու են:*

Վերացվել է ***արտոնագրային հարկը****:*

Ինքնազբաղված անձանց և ընտանեկան ձեռնարկատիրության համար ներդրվել է ***միկրոձեռնարկատիրության հարկման արտոնյալ համակարգ՝*** *իրացման շրջանառության 24 մլն դրամ շեմով: Վարձու աշխատողի համար եկամտային հարկը սահմանվում է ամսական 5 հազար դրամի չափով՝ անկախ աշխատավարձի մեծությունից:*

Ճանապարհային հարկ*. ավտոմեքենաների առք ու վաճառքով զբաղվող ֆիզիկական անձանց համար սահմանվել է խելամիտ հարկային բեռ (վաճառքի գնի 1 տոկոսի չափով): ՀՀ-ում գրանցված բեռնատար ավտոմեքենայի մասով սահմանված ճանապարհային հարկը վերացվել է:*

Պետական տուրք

- *Ավտոբուսներով, միկրոավտոբուսներով կամ թեթև մարդատար ավտոմեքենաներով ուղևորափոխադրումների կազմակերպում, մետաղադրամով կամ թղթադրամով շահագործվող ինքնաշխատ արքավորումների միջոցով սննդի առևտրի կամ խաղերի (բացառությամբ շահումով խաղերի) կազմակերպում գործունեության տեսակները տեղափոխվել են պետական տուրքի համակարգ:*
- *Տոտալիզատորի (այդ թվում՝ ինտերնետ տոտալիզատորի), իսկ 2021 թվականի հունվարի 1-ից՝ շահումով խաղերի (այդ թվում՝ ինտերնետ շահումով խաղերի) կազմակերպման գործունեության հարկումը տեղափոխվելու է շահութահարկի համակարգ:*

- Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2020 թվականին ակնկալվում է ստանալ 35.3 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, որից ընդհանուր բնույթի բյուջետային օժանդակությունը՝ 7.7 մլրդ դրամ, իսկ նպատակային բյուջետային օժանդակությունը՝ 27.6 մլրդ դրամ:
- Եվրոմիությունը շարունակում է հանդիսանալ բյուջետային աջակցություն տրամադրող հիմնական դոնորը: Վերջինիս կողմից են տրամադրվում պաշտոնական դրամաշորհների մոտ 45 տոկոսը:

Գծապատկեր 6. ՀՀ պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքն ըստ դոնորների, 2020թ. մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



Գծապատկեր 7. 2020թ. ՀՀ պաշտոնական դրամաշնորհների կառուցվածքն ըստ ոլորտների, մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



ԴԵՖԻՑԻՏ

- Պետական բյուջեի դեֆիցիտը դա բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ, ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելին, քան բյուջեի եկամուտներն են: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավվելով լրացուցիչ միջոցներ ֆինանսավորվում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:
- 2020 թվականին բյուջեի դեֆիցիտը կկազմի 160.7 մլրդ դրամ, որը գնահատվում է, որ հավասար կլինի ՀՆԱ-ի 2.3 տոկոսին:

Գծապատկեր 8. Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և դեֆիցիտը, 2015-2020 թվականներ



*2019թ. ճշգրտված մակարդակ

- Դեֆիցիտի ֆինանսավորումը իրականացվում է ներքին և արտաքին աղբյուրներից զուտ մուտքերի, այսինքն՝ դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ներգրավվող միջոցների մուտքերի ընդհանուր գումարի և փոխառու միջոցների տրամադրման կամ մարման ընդհանուր գումարի տարբերության հաշվին:

Գծապատկեր 9. Դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքը 2020թ., մլրդ դրամ



Գծապատկեր 10. Դեֆիցիտի ֆինանսավորման կառուցվածքն ըստ արտաքին և ներքին աղբյուրների, 2020թ., մլրդ դրամ



ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

- Այսպիսով, երբ հավաքագրված բյուջետային եկամուտները կառավարությանը հնարավորություն չեն տալիս իրականացնել պլանավորած ծրագրերը, կառավարությունը որոշում է պարտավորություններ վերցնել ներքին կամ արտաքին աղբյուրներից: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավվելով լրացուցիչ միջոցներ, իսկ դա նշանակում է մեծացնելով ներքին կամ արտաքին պարտքը, ֆինանսավորվում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:
- ՀՀ 2020թ. պետական բյուջեի հիմքում դրված կանխատեսումների համաձայն ՀՀ պետական պարտքը 2020թ. կաճի մոտ 144 մլրդ դրամով (301 մլն ԱՄՆ դոլար), որից արտաքին պետական պարտքը կազմում է 3, իսկ ներքին պետական պարտքը՝ 97 տոկոս:

  Արդյունքում տարեվերջին ՀՀ պետական պարտքը կկազմի 3,636 մլրդ դրամ (7,630 մլն ԱՄՆ դոլար) կամ ՀՆԱ-ի 51.2%-ը: Մասնավորապես, արտաքին պետական պարտքը կկազմի ՀՆԱ-ի 38.9, իսկ ներքին պետական պարտքը՝ 12.3 տոկոսը:

Գծապատկեր 11. ՀՀ պետական պարտքը, տոկոս ՀՆԱ-ի նկատմամբ, 2015-2020թթ.



► 2020թ. ՀՀ պետական պարտքի կառուցվածքում նախատեսվում է ավելացնել ներքին պետական պարտքի կշիռը: Ըստ կանխատեսումների 2020թ ներքին պետական պարտքը կկազմի պետական պարտքի 24.1 տոկոսը:

Գծապատկեր 12. ՀՀ պետական պարտքը, 2015-2020թթ.



*2019թ. ճշգրտված մակարդակ

► 2020թ. ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտքի գծով ակնկալվում է, որ կստացվեն 397 մլն ԱՄՆ դոլարի վարկեր, վարկերի մարումը կկազմի մոտ 407 մլն ԱՄՆ դոլար, իսկ տոկոսավճարները կկազմեն 184 մլն ԱՄՆ դոլար:

Գծապատկեր 13. ՀՀ արտաքին պետական պարտքի գծով գործառնությունները, 2020թ.



► Կառավարության ամենախոշոր վարկատուն Համաշխարհային Բանկն է: 2020թ. տարեվերջին կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի 40.4%-ը բաժին կընկնի Համաշխարհային Բանկին (Զարգացման Միջազգային Ընկերակցություն ու Վերակառուցման և Զարգացման Միջազգային Բանկ):

Գծապատկեր 14. Կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների, տոկոս



► 2020 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.2%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն 168 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 2.4%-ը:

Գծապատկեր 15. 2020թ. ստացվող վարկերի կառուցվածքն ըստ վարկատուների, մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



- Համաշխարհային բանկ
- Ասիական զարգացման բանկ
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ
- Եվրասիական զարգացման բանկ
- Ֆրանսիայի Հանրապետություն
- Գերմանիայի զարգացման վարկերի բանկ
- Եվրոպական ներդրումային բանկ
- Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ
- ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամ
- Ռուսաստանի Դաշնություն

Գծապատկեր 16. 2020թ. ստացվող վարկերի կառուցվածքն ըստ ոլորտների, մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը)



- Տրանսպորտ
- Ոռոգում, ջրամատակարարում և ջրահեռացում
- Տարածքային զարգացում
- Պաշտպանություն
- Էկոնոմիկա
- Կրթություն
- Այլ

ԾԱԽՍԵՐ

- Հիմք ընդունելով բյուջեի եկամուտների կանխատեսված մակարդակը և ելնելով դեֆիցիտի ֆինանսավորման հնարավորություններից, ՀՀ կառավարությունը ծրագրում է 2020 թվականին ապահովել ծախսերի 1,855.7 մլրդ դրամ մակարդակ, որը նախորդ տարվա հաստատված բյուջեի համեմատությամբ կաճի 207.6 մլրդ դրամով:
- 2020 թվականի հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը ամբողջական պահանջարկի վրա լինելու է ընդլայնող: Կառավարությունը նախանշել է այնպիսի հարկաբյուջետային քաղաքականություն, որը հիմքեր կստեղծի երկարաժամկետ կայուն տնտեսական աճի համար, այսինքն՝ կապիտալ ծախսերի մասնաբաժնի մեծացում և ընթացիկ ծախսերի՝ հարկային եկամուտների մակարդակին առնվազն հավասար մակարդակի ապահովում:
- Ծախսերի ամբողջ ծավալի 84.5 տոկոսը կամ 1,568.0 մլրդ դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին, 15.5 տոկոսը կամ 287.7 մլրդ դրամը՝ ոչ ֆինանսական ակտիվների գծով զուտ ծախսերին:

Աղյուսակ 2. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ, մլն դրամ

Տնտեսագիտական հոդվածներ	2018թ.	2019թ.	2020թ.	Կշիռը բյուջեի ծախսերում 2020թ.
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	1,446,904.7	1,648,089.8	1,855,697.1	100.0
այդ թվում՝				
ԸՆԹԱՑԻԿ ԾԱԽՍԵՐ	1,298,799.5	1,426,123.0	1,567,971.3	84.5
այդ թվում՝				
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ	152,755.1	168,077.1	177,661.5	9.6
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ	155,647.0	196,368.5	180,067.1	9.7
ՏՈԿՈՍԱՎՃԱՐՆԵՐ	139,014.9	158,057.9	168,116.4	9.1
ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐ	111,225.7	107,462.4	115,155.2	6.2
ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	126,318.0	124,103.7	158,914.9	8.6
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ	425,478.7	454,232.1	501,634.7	27.0
ԱՅԼ ԾԱԽՍԵՐ	188,360.0	217,821.2	266,421.4	14.4
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՀԵՏ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ	148,105.1	221,966.8	287,725.8	15.5
այդ թվում՝				
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ	151,988.1	221,968.1	287,745.9	15.5
ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ	-3,882.9	-1.3	-20.1	-0.001

Աղյուսակ 3. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

	Բաժին	2020թ. / 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ.	Կշիռը բյուջեի ծախսերում 2020թ. / 2019թ.
	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	361,658.7 / 315,739.5	14.5% ↑	19.5% / 19.2%
	Պաշտպանություն	308,016.3 / 313,275.4	-1.7% ↓	16.6% / 19.0%
	Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	152,452.6 / 318,792.9	9.8% ↑	8.2% / 8.4%
	Տնտեսական հարաբերություններ	195,423.1 / 133,357.8	46.5% ↑	10.5% / 8.1%
	Շրջակա միջավայրի պաշտպանություն	12,294.5 / 11,855.2	3.7% ↑	0.7% / 0.7%
	Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	22,927.8 / 18,043.4	27.1% ↑	1.2% / 1.1%

	Բաժին	2020թ. / 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ.	Կշիռը բյուջեի ծախսերում 2020թ. / 2019թ.
	Առողջապահություն	113,734.3 / 91,749.6	24.0% ↑	6.1% / 5.6%
	Հանգիստ, մշակույթ և կրոն	30,934.4 / 30,340.3	2.0% ↑	1.7% / 1.8%
	Կրթություն	161,111.2 / 141,870.5	13.6% ↑	8.7% / 8.6%
	Սոցիալական պաշտպանություն	492,045.1 / 444,260.1	10.8% ↑	26.5% / 27.0%
	Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	5,099.2 / 8,778.4	-41.9% ↓	0.3% / 0.5%
Ընդամենը		1,855,697.1 / 1,648,063.1	12.6% ↑	100.0% / 100.0%

Աղյուսակ 4. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ

Պետական մարմին	2020թ. մլն դրամ	2019թ.[1] մլն դրամ	2020թ./2019թ. տոկոս
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	492,907.4	444,533.5	10.9
ՀՀ պաշտպանության նախարարություն	307,236.7	306,368.2	0.3
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն	273,673.5	194,744.1	40.5
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	179,751.0	161,620.5	11.2
ՀՀ ֆինանսների նախարարություն	171,175.2	161,239.3	6.2
ՀՀ առողջապահության նախարարություն	109,324.6	89,590.0	22.0
ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	34,103.5	25,407.6	34.2
ՀՀ արդարադատության նախարարություն	17,629.5	16,916.3	4.2
ՀՀ արտաքին գործերի նախարարություն	15,501.9	14,962.3	3.6
ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	15,229.2	12,571.1	21.1
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն	8,586.6	6,288.1	36.6
ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն	6,984.1	6,723.0	3.9
ՀՀ ոստիկանություն	65,262.2	64,357.6	1.4
ՀՀ ազգային անվտանգության ծառայություն	35,131.8	32,785.2	7.2
ՀՀ պետական եկամուտների կոմիտե	28,706.1	22,063.5	30.1
ՀՀ վարչապետի աշխատակազմ	23,659.9	17,821.9	32.8
Բարձրագույն դատական խորհուրդ	12,662.3	12,380.7	2.3
ՀՀ քննչական ծառայություն	7,748.6	7,839.6	-1.2
Հայաստանի հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդ	7,520.0	7,425.8	1.3
ՀՀ Ազգային ժողով	6,096.6	5,254.2	16.0
ՀՀ դատախազություն	5,443.3	5,340.9	1.9
ՀՀ կադաստրի կոմիտե	5,200.0	3,991.2	30.3
ՀՀ վիճակագրական կոմիտե	4,334.5	3,013.1	43.9
Հանրապետության նախագահի աշխատակազմ	1,575.9	1,145.2	37.6
ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	1,181.7	1,152.4	2.5
ՀՀ հաշվեքննիչ պալատ	1,163.9	1,119.1	4.0
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	1,140.2	964.1	18.3
Հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում	842.9	798.9	5.5
ՀՀ հատուկ քննչական ծառայություն	737.9	739.5	-0.2
ՀՀ սահմանադրական դատարան	721.2	725.5	-0.6
Պետական վերահսկողական ծառայություններ	630.4	672.4	-6.2
Մարդու իրավունքների պաշտպանություն	515.4	452.6	13.9
Տնտեսական մրցակցության պաշտպանություն	427.2	406.2	5.2
Միջուկային և ճառագայթային անվտանգության կարգավորում	320.7	323.0	-0.7
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով	314.0	315.9	-0.6
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	229.7	254.0	-9.6
ՀՀ կառավարություն	5,705.2	9,384.4	-39.2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	813.6	820.4	-0.8
ՀՀ Շիրակի մարզպետարան	712.8	721.5	-1.2
ՀՀ Լոռու մարզպետարան	655.6	670.4	-2.2
ՀՀ Սյունիքի մարզպետարան	635.0	642.9	-1.2
ՀՀ Կոտայքի մարզպետարան	627.2	643.2	-2.5
ՀՀ Արմավիրի մարզպետարան	606.5	616.2	-1.6
ՀՀ Տավուշի մարզպետարան	605.7	607.8	-0.4
ՀՀ Արարատի մարզպետարան	604.4	600.6	0.6
ՀՀ Արագածոտնի մարզպետարան	578.6	573.8	0.8
ՀՀ Վայոց ձորի մարզպետարան	482.9	475.5	1.6
Ընդամենը	**1,855,697.1**	**1,648,063.1**	**12.6**

[1] 2019թ. ցուցանիշները հաշվարկվել են հիմք ընդունելով պետական մարմնի կողմից 2020թ. իրականացվող ծրագրերը՝ մինչև կառավարության կառուցվածքի 2019թ. փոփոխությունները համապատասխան պետական մարմինների կողմից իրականացվող ծախսերը:

Աղյուսակ 5. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄԵԾ 10 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

	Ծրագիր	2020թ. / 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ.	Կշիռը բյուջեի ծախսերում 2020թ. / 2019թ.
18.9%	Կենսաթոշակային ապահովություն	351,652.5 / 312,081.2	12.7% ↑	18.9% / 18.9%
16.3%	ՀՀ պաշտպանության ապահովում	303,053.6 / 300,585.2	0.8% ↑	16.3% / 18.2%
9.1%	Պետական պարտքի կառավարում	168,184.6 / 158,125.3	6.4% ↑	9.1% / 9.6%
5.4%	Հանրակրթության ծրագիր	99,854.7 / 87,259.8	14.4% ↑	5.4% / 5.3%
4.5%	Ճանապարհային ցանցի բարելավում	83,308.2 / 42,445.1	96.3% ↑	4.5% / 2.6%
3.8%	Տարածքային զարգացում	70,048.2 / 56,731.5	23.5% ↑	3.8% / 3.4%
2.1%	Անապահով սոցիալական խմբերին աջակցություն	38,689.5 / 38,597.3	0.2% ↑	2.1% / 2.3%

2.0%	Քաղաքային զարգացում	36,504.5 26,146.4	39.6% ↑	2.0% 1.6%
1.9%	Հասարակական անվտանգության ապահովում	35,811.2 27,349.3	30.9% ↑	1.9% 1.7%
1.8%	Ոռոգման համակարգի առողջացում	33,935.0 16,901.3	100.8% ↑	1.8% 1.0%
Ընդամենը		1,221,042.1 1,066,222.4	14.5% ↑	65.8% 64.7%

Աղյուսակ 6. 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄԵԾ ԱՃ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ 5 ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

	Ծրագիր	2020թ. 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ. մլն դրամ	Կշիռը բյուջեի ծախսերի ընդամենը աճում
59.4%	Ճանապարհային ցանցի բարելավում	83,308.2 42,445.1	40,863.2	19.7%
	Կենսաթոշակային ապահովություն	351,652.5 312,081.2	39,571.3	19.1%
	Ոռոգման համակարգի առողջացում	33,935.0 16,901.3	17,033.7	8.2%
	Տարածքային զարգացում	70,048.2 56,731.5	13,316.7	6.4%
	Հանրակրթության ծրագիր	99,854.7 87,259.8	12,594.9	6.1%
	Ընդամենը 5 ծրագրեր	638,798.6 515,418.9	123,379.8	59.4%
	Ընդամենը բյուջետային ծախսեր	1,855,697.1 1,648,063.1	207,634.0	100.0%

Աղյուսակ 7. ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ

	Ոլորտ	2020թ. / 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ.	Կշիռը բյուջեի ծախսերում 2020թ. / 2019թ.
	Սոցիալ-մշակութային	789,503.0 703,169.8	12.3% ↑	42.5% 42.7%
	Տնտեսության զարգացում	323,347.7 233,162.8	38.7% ↑	17.4% 14.1%
	Հասարակական կարգ և անվտանգություն	115,623.2 109,713.9	5.4% ↑	6.2% 6.7%
	Հանրային կառավարում և կոռուպցիայի դեմ պայքար	319,986.5 295,648.4	8.2% ↑	17.2% 17.9%
	Պաշտպանություն	307,236.7 306,368.2	0.3% ↑	16.6% 18.6%
Ընդամենը		1,855,697.1 1,648,063.1	12.6% ↑	100.0% 100.0%

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐՆ ԸՍՏ ՀԻՄՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ. ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2020 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համար գերակա են շահառուներին մատուցվող ծառայությունների շարունակականության ապահովումը, ծառայությունների որակի բարելավումը, համայնքային այլընտրանքային ծառայությունների ընդլայնումը:

Կառավարությունը մասնավորապես կարևորում և 2020թ. սոցիալական պաշտպանության ծրագրերի ֆինանսավորման ծավալներում իրենց արտահայտությունն են ստացել հետևյալ ուղղությունները՝

Սոցիալական պաշտպանության ոլորտում բարեփոխումների շարունակականությունը,

Կենսաթոշակների և նվազագույն աշխատավարձի բարձրացումը,



Ժողովրդագրական իրավիճակի բարելավումը,

Զբաղվածության և բնակարանային ապահովման խնդիրները:



ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Ընտանեկան նպաստ ստացող ընտանիքների կշիռը ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ[1] (ԸԿԲՆ) ստացողների թվում կկազմի ավելի քան 75%:*

- *Ծնելիության գումարային գործակիցը 1.56-ից **կաճի** 2022թ. կկազմի 1.6:*



- *Կայուն զբաղվածություն ապահովող միջոցառումների արդյունքում աշխատանքի տեղավորված անձանց կշիռը այդ միջոցառումներում ընդգրկվածների թվաքանակում 79%-ից **կաճի** և 2022թ. կկազմի **80%**:*

- *Միջին աշխատանքային կենսաթոշակը 2020թ. կկազմի **43,816** դրամ, իսկ 2022թ. կհավասարվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին:*

- *Կյանքի դժվար իրավիճակում հայտնված երեխաների 40%-ին 2022թ. կմատուցվեն սոցիալ հոգեբանական վերականգնողական ծառայություններ՝ ներկա 20%-ի դիմաց:*

- *Կբարելավվի հաշմանդամություն ունեցող անձանց մատուցվող ծառայությունների հասցեականությունը և արդյունավետությունը. պետական ծառայություններ ստացողների կշիռը 2020-ին **կաճի 1.3** տոկոսային կետով և կկազմի հաշմանդամություն ունեցող անձանց **7.3%**-ը:*



- *2020 թվականի վերջում կգործեն **36 համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոններ**[2] (ՀՍԾՏԿ-ներ:)*

[1] **Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ** - առանձնացվում են հետևյալ երեք տեսակները՝ 1) ընտանեկան նպաստ՝ երեխա ունեցող աղքատ ընտանիքների համար, 2) սոցիալական նպաստ՝ երեխա չունեցող աղքատ ընտանիքների համար և 3) հրատապ օգնություն՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների համար:

[2] **Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն** – Տարածքային կենտրոն, որտեղ կազմակերպվում են հաճախորդի բոլոր սոցիալական կարիքների բավարարման գործընթացները, որտեղ անձը կարող է դիմել սոցիալական որևէ խնդրով՝ առանց հաշվի առնելու խնդրի «պատկանելությունը» այս կամ այն ենթաոլորտին (կենսաթոշակ, նպաստներ, զբաղվածություն և այլն):

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կենսաթոշակները կբարձրանան: Կառավարության ծրագրի համաձայն պարբերաբար կբարձրացվեն պետական կենսաթոշակները՝ ապահովելով միջին կենսաթոշակի չափի առաջանցիկ աճ գնաճի նկատմամբ, իսկ ՄԺԾԾ ժամանակահատվածում աշխատանքային միջին կենսաթոշակը կհավասարվի նվազագույն սպառողական զամբյուղի արժեքին:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանում բոլոր կարգի կենսաթոշակները կբարձրանան միջինը 10 տոկոսով: Նվազագույն կենսաթոշակը 25,500 դրամի փոխարեն կկազմի 27,000 դրամ, աշխատանքային միջին կենսաթոշակը կկազմի է 43,816 դրամ՝ 2019թ. 40,245 դրամի դիմաց:

+10%

Կենսաթոշակների միջին մեծությունը և շահառուների թվաքանակը



Նվազագույն աշխատավարձը կբարձրանա 13,000 դրամով: 2020թ. հունվարի 1-ից նվազագույն ամսական աշխատավարձը կկազմի 68,000 դրամ՝ նախկին 55,000 դրամի փոխարեն: Համաձայն նախնական գնահատականների նվազագույն աշխատավարձի փոփոխությունը կազդի 58,000 պետական ու 130,000 մասնավոր աշխատողների վրա: Պետական բյուջեի համար դա կստեղծի 2 մլրդ դրամի հավելյալ ծախս:

Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ (ԸԿԲՆ) կշարունակեն ստանալ մոտ 100 հազար ընտանիքներ: Այս նպաստներին ուղղվող ֆինանսական ռեսուրսները չեն աճի, միջոցառմանը կուղղվի 37,698 մլն դրամ: Նպաստառուների թվաքանակը կանխատեսվում է, որ կկազմի 99,914 ընտանիք, իսկ ընտանեկան նպաստի միջին ամսական չափը՝ 31,442 դրամ:

2018թ. տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության տվյալների համաձայն ԸԿԲՆ ծրագիրը նպաստել է աղքատության կրճատմանը՝ 25.8-ից նվազեցնելով մինչև 23.5 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատության կրճատմանը՝ 3.6-ից մինչև 1.0 տոկոս:

ԸԿԲՆ հասցեականության բարձրացման նպատակով կառավարությունը քննարկվում է ընտանիքների անապահովության գնահատման կարգում նոր բնութագրիչների կիրառման հետ կապված հարցադրումներ, համակարգի արդյունավետության բարձրացման ու նպաստառուների համար կայուն եկամտի ստեղծմանն ուղղված միջոցառումներ:

Սոցիալական շտապ օգնության ծառայություններին կուղղվի 5.6 մլն դրամ: Այս միջոցառումը կապահովի, որ անհատ քաղաքացիների մասհանումներից, հասարակական, բարեգործական կազմակերպություններից և այլ հատկացումներից հավաքագրված մթերքը, սնունդը, հագուստը և այլ իրերը սոցիալական շտապ օգնության համակարգի շրջանակներում տրամադրվեն դրանց կարիքն ունեցող ընտանիքներին:

Կշարունակվի տնային պայմաններում և ցերեկային կենտրոններում տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկումը: Տնային պայմաններում խնամքի ծառայություններին կուղղվի 236.9 մլն դրամ, կսպասարկվեն 3,260 շահառու:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձաց կտրամադրվեն տնային խնամքի ծառայություններ: 2020թ. կմեկնարկի տնային խնամքի ծառայությունների տրամադրում նաև հոգեկան առողջության խնդիրներ ունեցողների համար:

Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը կաճի: 2020 թվականի հուլիսի 1-ից մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի չափը սահմանվում է 25,500 դրամ՝ տարեսկզբի 18,000 դրամի դիմաց: Գյուղական բնակավայրում հուլիսի 1-ից նպաստ կստանան բոլոր ծնողները՝ անկախ ծնողի աշխատելու հանգամանքից: Մինչև 2 տարեկան երեխայի խնամքի նպաստի տրամադրմանը կուղղվի 3,740.9 մլն դրամ՝ 2019թ. 2,720.3 մլն դրամի դիմաց, շահառուների թվաքանակը կկազմի 14,371՝ 2019թ. 12,594 մարդու դիմաց:



Ծննդյան միանվագ նպաստ. 2020 թվականի հուլիսի 1-ից հետո ծնված 1-ին և 2-րդ երեխայի ծննդյան դեպքում միանվագ նպաստի չափը սահմանվել է 300 հազար դրամ տարեսկզբի համապատասխանաբար 50 հազար և 150 հազար դրամի դիմաց: Երրորդ և ավելի երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը կմնա անփոփոխ՝ 1.0 մլն դրամ, հինգ և ավելի երեխայի ծննդյան դեպքում՝ 1.5 մլն դրամ: Այս կապակցությամբ բյուջետային ծախսերը կաճեն 2,430.9 մլն դրամով և կկազմեն 13,755.4 մլն դրամ: Շահառուների թվաքանակը նվազող է՝ 36,200 շահառու, 2019-ի՝ 40,019-ի դիմաց:

Բնակարանային ապահովման աջակցության ծավալները կաճեն: Երիտասարդ և երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությանը կուղղվի 526.8 մլն դրամ: Միանվագ դրամական աջակցություն կտրամադրվի.

- մարզային բնակավայրերում բնակարան ձեռք բերող 248 շահառու ընտանիքների (202.8 մլն դրամ),
- երիտասարդ ընտանիքների կանխավճարի ապահովագրության ձեռք բերմանը՝ 540 շահառու ընտանիքների (34.0 մլն դրամ):
- երեխայի ծննդով պայմանավորված՝ հիփոթեքային վարկ մարող 300 շահառու ընտանիքների (290.0 մլն դրամ):



Կավարտվեն երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանային խնդիրների լուծման պետական պարտավորությունները: Բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու համար բնակարանի գնման վկայագրի միջոցով ֆինանսական աջակցություն կտրամադրվի աղետի գոտու՝ Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի գյուղական բնակավայրերի ծրագրի շահառու ճանաչված 226 ընտանիքների: Այս ընտանիքների բնակարանային ապահովմանը կուղղվի 3,000.0 մլն դրամ՝ 2019-ի համեմատ 5.4 անգամ ավել:

Միջոցներ կուղղվեն նաև Շիրակի, Լոռու և Արագածոտնի մարզերի ոչ անվտանգ բնակության պայմաններում բնակվող 31 ընտանիքների բնակարանային պայմանների բարելավմանը:

Դրամական օգնություն է նախատեսվում տրամադրել բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերին: Անավարտ բնակարանաշինարարական կոոպերատիվների փայատերերի կողմից Խորհրդային Միության ռուբլով վճարված գումարի արժեզրկումից կրած կորուստների դիմաց կտրամադրվի դրամական օգնություն: Այս ծախսերին կուղղվի 730.9 մլն դրամ:

Զոհված զինծառայողների բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող 62 ընտանիքների բնակարանային պայմանների բարելավումներին կուղղվի 500.0 մլն դրամ:

Ընտանիքներին՝ կանանց և երեխաներին աջակցության ուղղվող ֆինանսական միջոցները նվազում են 0.7 տոկոսով: Առկա են պետության կողմից իրականացվող միջնորդությունների միջև վերադասավորումներ: Իրականացվող **բարեփոխումներն ուղղված են երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանը:** Նվազում են երեխաների գիշերօթիկ խնամքի ծառայությունների ծախսերը, ավելանում են կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաները և դրանով պայմանավորված խնամատար ընտանիքներին բնաիրային օգնության, նաև երեխայի խնամքի և դաստիարակության աջակցության ծախսերը:

Երեխաների **շուրջօրյա խնամքի ծառայություններ** կմատուցվեն 649 երեխայի: Միջոցառմանը կուղղվի 2,017.3 մլն դրամ:

Երեխաների **խնամքի ցերեկային ծառայությունների** տրամադրման գծով նախատեսվում է 291.2 մլն դրամ: Միջոցառմամբ կկանխարգելվի երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելը, այդ թվում՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաներին կտրամադրվի այլընտրանքային խնամք:

Մեկնարկում են ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության նախաձեռնություններ. 13.3 մլն դրամ կտրամադրվի ընտանիքում բռնության ենթարկված անձանց համար երկու ապաստարանի ստեղծմանը, որտեղ սոցիալական ծառայություններ կտրամադրվեն ընտանիքում բռնության ենթարկված շուրջ 60 անձանց, անհրաժեշտության դեպքում՝ նաև նրանց խնամքի տակ գտնվող երեխաներին: Կստեղծվի աջակցության կենտրոնների ցանց (66.7 մլն դրամ): Ընտանիքում բռնության ենթարկվածների ժամանակավոր աջակցությանը կուղղվի 10.0 մլն դրամ՝ յուրաքանչյուրին տրամադրելով ոչ ավելի, քան 150 հազար դրամի չափով աջակցություն:

Կֆինանսավորվեն **աշխատաշուկայում անմրցունակ՝ գյուղատնտեսական նշանակության հողօգտագործողներին սեզոնային զբաղվածության ապահովման** ֆինանսական աջակցության թվով 2,400 ծրագրեր: Մեկ ծրագրի միջին արժեքը կկազմի մոտ 252 հազար դրամ:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց անասնապահությամբ զբաղվելու միջոցով ինքնազբաղվածության խթանմանը նախատեսվում է հատկացնել 70.0 մլն դրամ՝ 2019-ի 50.0 մլն դրամի դիմաց: Ծախսի աճը 20.0 մլն դրամով կուղղվի 20 նոր ծրագրի:

Աշխատաշուկայում անմրցունակ անձանց 50 0 մլն դրամ կտրամադրվի **փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության** թվով 50 ծրագրերի իրականացմանը:



Մինչև երկու տարեկան երեխա խնամող մոտ 600 աշխատող կանայք կարող են վերադառնալ աշխատանքի՝ հնարավորություն ունենալով օգտվել երեխայի խնամքի դայակի ծառայություններից: Այս նպատակին նախատեսվում է ուղղել 449 մլն դրամ աջակցություն, որը նախորդ տարվա համեմատ ավել է 85 տոկոսով:

Կկազմակերպվի աշխատաշուկայում անմրցունակ և մասնագիտություն չունեցող 200 երիտասարդ մայրերի մասնագիտական ուսուցումը գործատուների մոտ: Այս նպատակին կուղղվի 129.0 մլն դրամ:

Մասնագիտություն ունեցող՝ աշխատանքային փորձ չունեցող 409 գործազուրկների աշխատանքային պրակտիկայի կազմակերպմանը կուղղվի 614.3 մլն դրամ:

Աշխատաշուկայում անմրցունակ 1,000 անձանց աշխատանքի տեղավորման համար գործատուներին տրամադրվող միանվագ փոխհատուցումներին կուղղվի 207.0 մլն դրամ:

Կշարունակվենն ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման գործընթացները: ՀԲ վարկային միջոցներով (Սոցիալական պաշտպանության ոլորտի վարչարարության երկրորդ վարկային ծրագիր, վարկային միջոցներ՝ 3,959.2 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 918.0 մլն դրամ) կշարունակվեն հանրապետության տարբեր տարածաշրջաններում համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնների համար հատկացված շինությունների վերանորոգման ու վերազինման աշխատանքները: Միջոցներ կուղղվեն նաև ոլորտի այլ բարեփոխումներին (Կենսաթոշակային համակարգի արդիականացում, ԱՍՀՆ վերլուծական կարողություն-ների և մշտադիտարկման ու գնահատման համակարգերի հզորացում):

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Սոցիալական պաշտպանության ծրագրերի բյուջեի 72.2 տոկոսը ուղղվում է «Կենսաթոշակային ապահովություն» ծրագրին: Հաջորդ խոշոր երեք ծրագրերն են՝ «Անապահով սոցիալական խմբերին աջակցություն», «Սոցիալական ապահովություն» և «Ժողովրդագրական վիճակի բարելավում» ծրագրերը, որոնք կազմում են սոցիալական պաշտպանության բյուջեի համապատասխանաբար 7.9; 5.3 և 3.7 տոկոսը:
- 2020թ. բյուջետային ռեսուրսների աճի տեսանկյունից կրկին առաջին դիրքում է «Կենսաթոշակային ապահովություն» ծրագիրը, որին բաժին է ընկնում սոցիալական պաշտպանության բյուջեի աճի մոտ 82 տոկոսը կամ մոտ 39.6 մլրդ դրամ: Արդյունքում կենսաթոշակային ապահովման բյուջեն աճել է 12.7 տոկոսով:
- Ոլորտի հաջորդ կարևոր ուղղություններ են համարվել Ժողովրդագրական վիճակի բարելավումը, Սոցիալական պաշտպանության համակարգի բարեփոխումները և Բնակարանային ապահովումը: Համանուն ծրագրերին ուղղվել է բյուջեի աճի համապատասխանաբար 8.2; 6.3 և 6.1 տոկոսը:
- Սոցիալական պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 5,546 մլն դրամ, որը նախորդ տարվա ծախսերը զիջում է 870 հազար դրամով:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի քաղաքականության հիմքում դրված են.

- *բուժօգնության տրամադրման հավասարության,*
- *արդարության,*
- *մատչելիության և*
- *բժշկական օգնության որակի ապահովումը:*

Քաղաքականության առաջնահերթություններն են համարվում հետևյալ ծառայությունները՝

Առողջության առաջնային պահպանում

Մոր և մանկան առողջապահություն

Վերարտադրողական առողջության պահպանում

Կառավարությունը կարևորում է՝

Հիվանդությունների կանխարգելման ճանապարհով բնակչության առողջության հիմնական ցուցանիշների բարելավումը

Մահացության ցուցանիշների կրճատումը, հանրապետության ամբողջ տարածքում, ժամանակակից բժշկական ծառայությունները հասանելի դարձնելը



Հանրապետությունում ուռուցքաբանական ծառայությունների շարունակական բարելավումը

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *1 և 2 տարեկան երեխաների ընդգրկվածությունը բոլոր պատվաստումներում **կաճի.***

  1 տարեկան՝ 92% → 99% *2 տարեկան՝* 95% → 99%

- *Ոչ վարակիչ հիվանդությունների սկրինինգային ծրագրերում ընդգրկվածությունը **կաճի.***



- *Առանձին հիվանդություններով դեղեր ստանալու իրավունք ունեցող անձանց դեղերով ապահովվածությունը **կաճի.***



- *Պետական բյուջեի միջոցների հաշվին առողջության ապահովագրություն տրամադրված անձանց թիվը **կեռապատկվի՝***



- *Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված շահառուները կկազմեն հիվանդանոցային բժշկական օգնություն ստացածների **20%**-ը՝ նախորդ տարիների **18%**-ի փոխարեն:*

- *Մանկական (0-5 տարեկան) մահացության մակարդակը 1,000 կենդանածնի հաշվով **կկրճատվի՝*** 10 → 8.5

- *Մայրական մահացության մակարդակը, 100,000 կենդանածնի հաշվով, **կկրճատվի՝*** 16.3 → 15

- ***Կնվազեն** կառավարելի վարակիչ հիվանդություններով[1] հիվանդացության և մահացության մակարդակները. մահվան դեպքերի քանակը 100,000 բնակչի հաշվով **7.94**-ից կնվազի մինչև **7.54**:*

- *Ոչ վարակիչ հիվանդություններից մահվան դեպքերը **կկրճատվեն**: Մահվան դեպքերի քանակը 100,000 բնակչի հաշվով կնվազի՝ Չարորակ նորագոյացությունների դեպքում 189.6 դեպքից մինչև 183.9 դեպք, Շաքարային դիաբետի դեպքում՝ 39.2 դեպքից մինչև 38 դեպք, Արյան շրջանառության համակարգի հիվանդությունների դեպքում՝ 454.5 դեպքից մինչև 440.9 դեպք:*

- *Հանրապետությունում **3%**-ով **կնվազի** ծխողների քանակը:*

- *Կունենանք արդիականացված **4** բժշկական հաստատություն՝ նախկին 2-ի փոխարեն:*

[1] **Կառավարելի վարակիչ հիվանդություններ** - Պլանային պատվաստումների միջոցով կանխարգելվող վարակիչ հիվանդություններն են՝ դիֆթերիա, կապույտ հազ, փայտացում, կարմրուկ, կարմրախտ, համաճարակային պարոտիտ (խոզուկ), պոլիոմիելիտ, հեպատիտներ ցց և ց տուբերկուլոզ, հեմոֆիլուսային Բ տիպի վարակ, ռոտավիրուսային, մենինգակոկային, պնևմակոկային և մարդու պապիլոմավիրուսային վարակներ, տուլարեմիա, սեզոնային գրիպ, որոնք ներառված են պատվաստումների ազգային օրացույցում:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություններին պետական բյուջեից նախորդ տարվա համեմատ կուղղվի **1,2 մլրդ դրամով ավել** միջոցներ և կկազմի 26,6 մլրդ դրամ: Հավելյալ միջոցներով կիրականացվեն՝

- **14,000 աղջիկների սկրինինգներ**,
- **վահանաձև գեղձի ԳՁՀ հորմոնների հետազոտություններ**,
- բարձր ռիսկային շուրջ **60,000 հղիների լրացուցիչ նպատակային հետազոտություններ**,
- **14,000 ամուսնական զույգի հավաստագրով մինչ հղիության հետազոտություններ**:



Պետական հոգածության տակ կվերցվի 0-18 տարեկան երեխաների բժշկական օգնությունը: Սա նշանակում է, որ սկսած 2020թ. մինչև 18 տարեկան բոլոր երեխաների բժշկական օգնությունը՝ ծառայությունների հաստատված շրջանակներում, իրականացվելու է պետական միջոցներով՝ ի տարբերություն նախորդ տարիների, երբ բժշկական նույն օգնության ծառայություններն անվճար էին միայն մինչև 7 տարեկանների համար: Երեխաների բժշկական օգնության ծառայություններին նախատեսվում է ուղղել 11,2 մլրդ դրամ՝ **3 մլրդ դրամով ավել** 2019թ. նախատեսվածից:

Մանկաբարձական բժշկական օգնության ծառայությունների շրջանակը կընդլայնվի: Ծննդաբերության, նախածննդյան և հետծննդյան բարդությունների բուժօգնության նպատակով 2020-ին նախատեսվում է նախորդ տարվա համեմատ 3,965 դեպքով ավել ծառայություն մատուցել՝ հասցնելով այդ ցուցանիշը 53,400 դեպքի: Այդ նպատակով պետական բյուջեից կուղղվի 7,6 մլրդ դրամ՝ **594.6 մլն դրամով ավել** նախորդ տարվա համեմատ:





Կբարելավվի իմունականխարգելման ծրագիրը: 2020 թվականից նախատեսվում է ներդնել վեցավալենտ պատվաստանյութ: Նոր պատվաստանյութերի ներդրման նպատակով **1,0 մլրդ դրամով կավելացվի** ոլորտին ուղղվող ֆինանսավորումը՝ կազմելով 3,3 մլրդ դրամ:

Շտապ բժշկական օգնության (ՇԲՕ) բրիգադների թվաքանակը կաճի: ՇԲՕ ծառայությանը կուղղվի **1,0 մլրդ դրամով ավել** միջոցներ՝ նախորդ տարվա 3,3 մլրդ դրամի համեմատ: ՇԲՕ մեկ բրիգադի օրական միջին ծանրաբեռնվածությունը 12 կանչից կաճի մինչև 13 կանչ: Երևանում ՇԲՕ ծառայություններ կմատուցեն թվով 363, մարզերում՝ 314 ՇԲՕ ծառայության մեքենաներ: Ուղղաթիռով սանավիացիայի բժշկական օգնության ծառայությունների տևողությունը նախորդ տարվա 153 ժամից կաճի մինչև 200 ժամ:



Ծխելու դեմ պայքարի շրջանակներում առնվազն մեկ բժշկական կազմակերպությունում կներդրվի ծխախոտի օգտագործման դադարեցմանն ուղղված աջակցության ծառայություն (թեժ գիծ): Կիրականացվեն նաև առողջ ապրելակերպի և ծխելու դեմ պայքարի հանրային իրազեկման միջոցառումներ: Այս նպատակներին կուղղվի **100 մլն դրամ**:



Սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկվածների բժշկական օգնության ծառայություններին կուղղվի 19,2 մլրդ դրամ՝ 2019թ. 11,0 մլրդ դրամի դիմաց կամ **8.2 մլրդ դրամով ավել**, որը պայմանավորված է հիվանդանոցային մասնագիտացված, մասնավորապես նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների շրջանակի ընդլայնմամբ: Միջինում կմատուցվեմ 184,492 հատ ծառայություններ՝ 104 հազար դրամ արժողությամբ՝ նախորդ տարվա համապատասխանաբար՝168,171 ծառայության և 65 հազար դրամի դիմաց:

Զգալիորեն կաճի անպտուղ զույգերին բուժման ծառայությունների տրամադրումը: Սոցիալապես անապահով, բնակչության առանձին և հատուկ խմբերում ընդգրկված 1,206 անպտուղ զույգերին կտրամդրվի 917,9 մլն դրամի բժշկական օգնություն՝ նախորդ տարվա 210,0 մլն դրամի դիմաց, ինչը շուրջ **4 անգամ ավել** է: Նախատեսվում է անպտուղ զույգերի պատճառագիտության հետազոտում և բուժում, ինչպես նաև՝ արհեստական սերմնավորում և բեղմնավորում:

Ստենդավորման՝ սրտի անհետաձգելի վիրահատությունների իրականացմանը կուղղվի **2,0 մլրդ դրամ**, ինչը նշանակում է, որ 2,667 հիվանդի կմատուցվի կյանք փրկող սրտի անհետաձգելի վիրահատական ծառայություններ (ստենտավորում):

Ուռուցքաբանական ծառայությունները կբարելավվեն: Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնությանը կուղղվի 3,420.1 մլն դրամ՝ 2019-ի պետական բյուջեով հաստատված 1,917.3 մլն դրամի դիմաց: Կապահովվի ուռուցքաբանական բժշկական օգնության ծառայությունների շրջանակի ընդլայնում: Ուռուցքաբանական և արյունաբանական հիվանդությունների բժշկական օգնության գծով օգտվելու դեպքերի թիվը կկազմի 20,760՝ 2019-ի համեմատ աճելով 21, իսկ 2018-ի համեմատ՝ 84 տոկոսով: Կաճի նաև միավոր ծառայության միջին արժեքը՝ 112 հազար դրամից մինչև 165 հազար դրամ:



Մեկնարկում է «Կոլոռեկտալ քաղցկեղի սկրինինգ» նախաձեռնությունը: Առողջության առաջնային պահպանման[1] երկու կազմակերպություններում պիլոտային կարգով կիրականացվի 50-75 տարեկանների մոտ կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերման սկրինինգներ: Միջոցատմանը կուղղվի 11.2 մլն դրամ: Հնարավոր կլինի գրանցել կոլեռեկտալ քաղցկեղից մահացության ցուցանիշների նվազում, ինչպես նաև 5 տարվա ապրելիության ցուցանիշի բարելավում:

Կիրականացվեն մարդու օրգանների փոխպատվաստման ծառայություններ: Նախատեսվում է 200.0 մլն դրամ ուղղել մարդու օրգանների, մասնավորապես՝ երիկամի, ինչպես նաև ոսկրածուծի/ցողունային բջիջների փոխպատվաստման վիրահատություն-ներին: Պլանավորվում է իրականացնել ոսկրածուծի 15, իսկ այլ օրգանների՝ 25 փոխպատվաստումներ:



[1]**Առողջության առաջնային պահպանում** - Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում ընդհանուր բնույթի արտահիվանդանոցային սպասարկման ծառայությունների իրականացում: Այն հիմնականում ներառում է ընտանեկան բժշկի և տեղամասային թերապևտի (մանկաբույժի) կողմից բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման, բնակչության մինչբժշկական օգնության և սպասարկման ծառայություններ:

Միջոցներ կուղղվեն **գլխուղեղի սուր և/կամ ենթասուր իշեմիկ կաթվածների** թրոմբոլիտիկ բուժման և մեխանիկական թրոմբէկտոմիա ծառայության զարգացմանը:

Դեղապահովման շրջանակը կընդլայնվի: Հիպոֆիզային գաճաճություն ախտանիշ և վիրուսային հեպատիտ Ց հիվանդություններ ունեցողները կներառվեն անվճար և արտոնյալ պայմաններով դեղորայք ստացողների ցանկում: Բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց դեղորայքի տրամադրմանը կուղղվի 3,190.8 մլն դրամ՝ 2019-ի պետական բյուջեով հաստատված 2,600.0 մլն դրամի դիմաց՝ ապահովելով 14 հիվանդության և 242,886 շահառուի ծածկույթ:



Խրախուսվում է բժիշկների աշխատանքը մարզերում: Տարվա ընթացքում մարզեր կգործուղվեն **50** բժիշկներ՝ տեղերում առաջացած բժիշկների պակասը ժամանակավորապես լրացնելու նպատակով:

ՀԲ վարկային միջոցներով (Ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելման և վերահսկման վարկային ծրագիր՝ վարկային միջոցներ՝ 1,158.5 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 217.1 մլն դրամ) կշարունակվեն ՀՀ բնակչության ռիսկային խմբերում ՈՎՀ սքրինինգային հետազոտություններ, կիրականացվի Վայոց ձորի մարզի նոր բժշկական կենտրոնի և Գեղարքունիքի մարզի Մարտունու բժշկական կենտրոնի նոր շենքերի կառուցում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ
(փակագծերում՝ կշիռն ըդամենը առողջապահության ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն
- Առողջության առաջնային պահպանում
- Մոր և մանկան առողջության պահպանում
- Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում
- Հանրային առողջության պահպանում
- Շտապ բժշկական օգնություն
- Դեղապահովում
- Առողջապահության համակարգի արդիականացման և արդյունավետության բարձրացման ծրագիր
- Վարակիչ հիվանդությունների կանխարգելման ծրագիր
- Դատաբժշկական և ախտաբանաանատոմիական ծառայություններ
- Խորհրդատվական, մասնագիտական աջակցություն և հետազոտություններ

- Ի լրումն՝ Առողջապահության ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 991.9 մլն դրամ, որը նախորդ տարվա ծախսերից ավելի է 21.5 մլն դրամով:

- Առողջապահության ծրագրերի բյուջեի ավելի քան 80 տոկոսն ուղղվում է ոլորտում իրականացվող չորս ամենամեծ ծրագրերին, դրանք են՝ «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն», «Առողջության առաջնային պահպանում», «Մոր և մանկան առողջության պահպանում» և «Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում» ծրագրերը:

- 2020թ. առողջապահության բյուջեի աճի մոտ 44 տոկոսն ուղղվել է «Սոցիալապես անապահով և առանձին խմբերի անձանց բժշկական օգնություն» ծրագրին, որը բյուջեն նախորդ տարվա համեմատությամբ աճել է 46.8 տոկոսով:

- Հաջորդ երկու կարևոր ուղղությունները, որոնց ուղղվել է առողջապահության բյուջեի աճի 22.2 և 18.0 տոկոսը դրանք համապատասխանաբար Մոր և մանկան առողջության պահպանում և Ոչ վարակիչ հիվանդությունների բժշկական օգնության ապահովում ծրագրեր են:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտում կշարունակվեն հիմնական բարեփոխումները, որոնց նպատակն է՝

- *Կրթության որակի բարձրացումը,*
- *Բնակչության բոլոր խավերի համար որակյալ կրթության մատչելիության ապահովումը,*
- *Համակարգի արդյունավետության շարունակական բարձրացումը:*

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՐԵՎՈՐՈՒՄ Է՝

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (2022թ.)

- *Պարտադիր կրթության բոլոր երեք մակարդակներում ընդգրկվածությունն առկա առավելագույն 91.3%-ից **կաճի** և 2021թ. կկազմի **99%**:*

- *Արտադպրոցական դաստիարակության ծրագրերում 6-18 տարեկան երեխաների ընդգրկվածությունը մինչև 2022թ. կգրանցի **կրկնակի աճ**՝*

Ընդամենը 5.1% → 10%

Գյուղական բնակավայրեր 2.5% → 5%

- *Միջազգային գիտական միջոցառումներում և համաժողովներում ներկայացված գիտական հետազոտությունների քանակը մինչև 2022թ. **կաճի** մեկ քառորդով:*

- *Բոլոր դպրոցներում աշակերտների համար **կապահովվի դպրոցական սնունդ** (2023թ.):*

- *Միջազգային համաթվերում կապահովենք կրթության համակարգի որակի և տարրական կրթության որակի գնահատականների առաջընթաց (1-7 բալային համակարգ):*



- ***Կբարելավվեն պետական միասնական քննությունների արդյունքները**. Հայոց լեզու և Հայ գրականություն, Մաթեմատիկա առարկաներից միջինացված գնահատականը 2021թ. կկազմի **15 միավոր** (1-20 բալային համակարգում):*

- *Ազգային և միջազգային ստուգատեսներում (TIMSS) կարծանագրվի Մաթեմատիկայի և Բնագիտական առարկաների արդյունքների առաջընթաց մինչև **500** միավոր:*

- *2023թ. դրությամբ կամավոր ատեստավորմանը մասնակցած հանրակրթական դպրոցի ուսուցիչների թիվը կկազմի 45%:*



- *Հանրապետության բոլոր դպրոցները 2021թ. հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող աշակերտներին:*



- ***Առանձնահատուկ կարիք ունեցող երեխաները ամբողջությամբ կընդգրկվեն հանրակրթական դպրոցներում** (2021թ):*

- *Նախնական և միջին մասնագիտական կրթության ընդգրկումը 24.8%-ից **կաճի** և 2022թ. կկազմի **27%**:*

- *Ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցմամբ սովորող ուսանողների կշիռը բարձրագույն կրթություն ստացողների մեջ 18%-ից **կաճի** և 2022թ. կկազմի **24%**:*

- *Խոցելի, սոցիալապես անապահով և սահմանամերձ համայնքների ընտանիքների ուսանողների տեսակարար կշիռը **կաճի** 4.1%-ից և 2022թ. կկազմի **5%**:*

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ՀԱՍՆԵԼՈՒ ՎԵՐՈՆՇՅԱԼ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ



Մանկավարժների աշխատավարձը կաճի 10 տոկոսով: Աստիճանաբար կբարձրացվի ուսուցիչների աշխատավարձը՝ միջին ժամկետ հատվածում այն հասցնելով մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի մակարդակին: ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով մանկավարժների աշխատավարձի ֆոնդը կաճի 9,382.1 մլն դրամով, որից 5,861.3 մլն դրամը՝ աշխատավարձերի բարձրացման գծով աճն է:

Կավելանան երեխաներին սննդով ապահովող հաստատությունները: 2020 թվականին սննդով կապահովվեն ՀՀ Արագածոտնի, Արարատի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերի, սեպտեմբերից՝ նաև Գեղարքունիքի մարզի պետական հանրակրթական դպրոցների տարրական դասարաններում և նախակրթարաններում ընդգրկված, շուրջ 65.9 հազար երեխաներ: Երեխաների սննդով ապահովման գծով նախատեսվել է 1,662.9 մլն դրամ՝ 2019 թվականի 1,121.9 մլն դրամի դիմաց:





Խրախուսվում է դպրոցներում STEM կրթության և ռոբոտատեխնիկայի զարգացման ապահովումը: Հատկացումները կկազմեն 671.7 մլն դրամ՝ 2019 թվականի 352.2 մլն դրամի դիմաց: Ծախսերը նախատեսվել են ռոբոտաշինության 30 խմբակների և ինժեներական 676 լաբորատորիաների խմբակավարների վարձատրության գծով, 2019 թվականի՝ համապատասխանաբար 74 խմբակների և ինժեներական 348 լաբորատորիաների դիմաց:

Հեռավոր, սահմանամերձ, լեռնային և բարձր լեռնային բնակավայրերը մանկավարժական կադրերով համալրելու խնդիրը կարևորվում է: Հանրակրթական դպրոցների մանկավարժներին և դպրոցահասակ երեխաներին տրանսպորտային ծախսերի փոխհատուցմանը կուղղվի շուրջ 276.0 մլն դրամ՝ 2019 թվականի 79.1 մլն դրամի դիմաց:

Միջազգային օլիմպիադայի նախապատրաստում: 2022 թվականին նախատեսվում է ՀՀ-ում անցկացնել կենսաբանության միջազգային օլիմպիադա, որի նախապատրաստման աշխատանքները կսկսվեն 2020-ից և այդ նպատակին կուղղվի 24.9 մլն դրամ:

Կմեկնարկի մանկավարժներին պարգևատրման նոր նախաձեռնություն: «Ուսուցչի օրվա» առթիվ հանրակրթական ուսումնական հաստատությունների մանկավարժների պարգևատրումներին կուղղվի 22.0 մլն դրամ:



Նախադպրոցական այլընտրանքային ծախսաարդյունավետ մոդելների ներդրում. Այս նախաձեռնությանը կհատկացվի 154.9 մլն դրամ ծախս, ինչը կուղղվի այլընտրանքային, քիչ ծախսատար, կեսօրյա նախադպրոցական կրթական ծառայությունների տարբեր մոդելների ներդրմանը: Ծրագիրը կլուծի գյուղական համայնքների փոքրաթիվ դպրոցների արդյունավետ կառավարման խնդիրը, հնարավորություններ կստեղծի գյուղական համայնքի փոքրաթիվ դպրոցները վերածել կրթամշակութային կենտրոնների:

Հանրապետության դպրոցներից յուրաքանչյուրը կապահովվի 5-6 անուն հանրամատչելի գրականությամբ: «Գրադարանային ֆոնդի համալրում» միջոցառման գծով 2020 թվականին կհատկացվի 88.0 մլն դրամ կամ մոտ երկու անգամ ավել նախորդ տարվա մակարդակից:

Դպրոցահասակների համար կմեկնարկեն մի շարք նոր միջոցառումներ: Մասնավորապես՝ «Քո արվեստը դպրոցում», «Դասական երաժշտություն «Դաս Ա»», «Գիմնազիադա» համաշխարհային խաղերի մասնակցություն», «Քո գիտությունը դպրոցում», «ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 11-րդ դասարանների աշակերտների ռազմամարզական ճամբարի կազմակերպում»:

Ապահով դպրոց: Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավմանը 2020 թվականին նախատեսվել է ուղղել 637.3 մլն դրամ, իսկ փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցմանը՝ 1,000.0 մլն դրամ:



Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրմանը նախատեսվել է 2,469.9 մլն դրամ՝ 2019 թվականի 1,590.5 մլն դրամի դիմաց: Կիրականացվեն հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների ներառական դասավանդման հմտությունների զարգացման միջոցառումներ: ԱՄՆ ՄԶԳ «Ներառական կրթության համակարգի ներդրում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում կիրականացվեն առնվազն 100 հանրակրթական դպրոցների փոքրածավալ վերանորոգումներ, ներառյալ՝ թեքահարթակներ, հասանելի սանհանգույցներ, ռեսուրս սենյակներ, 5 մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնների փոքրածավալ վերանորոգում (դրամաշնորհային միջոցներ՝ 190.6 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 13.1 մլն դրամ):

ՀԲ վարկային միջոցներով («Կրթության բարելավում» վարկային ծրագիր, վարկային միջոցներ՝ 3,036.6 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 954.1 մլն դրամ) կշարունակվի հանրակրթության ոլորտի բարելավումը՝ միջնակարգ դպրոցի երրորդ աստիճանի զարգացման, հիմնական կրթական կազմակերպությունների կարողությունների և կրթության որակի բարելավման, մասնագիտական կրթության ուղղությամբ նորարարությունների խթանման միջոցով:



Կաճեն նախնական և միջին մասնագիտական կրթություն ստացողները: Ուսանողների կրթաթոշակների և ուսանողական նպաստների տրամադրմանը կուղղվի 12,409.3 մլն դրամ՝ 2019 թվականի 10,157.3 մլն դրամի դիմաց: Սովորողների թիվը կաճի 6,600-ով:

Ուսումնական վարկերի տոկոսավճարների փոխհատուցումները կավելանան: Այս ուղղությամբ կառավարությունը կծախսի մոտ 97 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ ավել է 42.5 մլն դրամով: Շահառուների թիվը 1,750 ուսանողից կաճի մինչև 3,000 ուսանող:

Միջազգային վարկանշավորման ցանկերում ընդգրկված ԲՈՒՀ-երում սովորող ուսանողներին աջակցության ծավալները կաճեն: Մեկ ուսանողի հաշվով միջինում կտրամադրվի 30.0 մլն դրամ՝ նախորդ տարվա 9.5 մլն դրամի դիմաց: Շահառուների թիվը չի փոխվի, կֆինանսավորվեն թվով 10 ուսանողներ:

Կավելանա գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ֆինանսավորումը: Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններին նախատեսվել է ուղղել 2,300.3 մլն դրամ՝ 2019 թվականի 1,677.0 մլն դրամի դիմաց: Պետական աջակցություն կտրամադրվի միջազգային ճանաչում ունեցող գիտական խմբի ղեկավարներին, նոր ստեղծված հետդոկտորական ծրագրերին, միջազգային հետազոտություններին և միջազգային հետազոտություններ իրականացնող խմբերին:



«Համահայկական և համապետական կրթական խորհրդաժողովի» կազմակերպմանը և անցկացմանը կուղղվի 28.9 մլն դրամ:

Օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդման համար կծախսվի 82.1 մլն դրամ՝ 2019 թվականի 24.3 մլն դրամի դիմաց:

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռը՝ ընդամենը կրթության և գիտության ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 1,857,385.0 մլն դրամ, որը նախորդ տարվա ծախսերը զիջում է 105.3 մլն դրամով:
- Կրթության և գիտության ծրագրերի բյուջեի 64.1 տոկոսը բաժին է ընկնում Հանրակրթության ծրագրին: Հաջորդում են «Գիտական և գիտատեխնիկական հետազոտություններ», «Նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթություն», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթություն» ծրագրերը:
- 2020թ. Կրթության և գիտության ծրագրերի բյուջեի աճի մոտ 82 տոկոսն ուղղվել է «Հանրակրթության ծրագրին», որի բյուջեն նախորդ տարվա համեմատությամբ աճել է 14.4 տոկոսով և կազմել 99,854.7 մլն դրամ:
- Ոլորտի ամենամեծ աճ արձանագրած ծրագրերն են «Համընդհանուր ներառական կրթության համակարգի ներդրում» և «Ապահով դպրոց» ծրագրերը:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

Կառավարության մշակութային քաղաքականությունն ուղղված է՝

- *պատմամշակութային ժառանգության պահպանմանը և հանրահռչակմանը,*
- *մշակութային կյանքին հանրային լայն մասնակցության ապահովմանը, մշակութային լայն քարոզչության իրականացմանը և մշակութային*
- *հաստատություններ քաղաքացիների հոսքի քաջալերմանը:*

Սպորտի բնագավառում Կառավարությունը նպատակ է հետապնդում

- *նպաստել մարզիկների համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը,*
- *մարզական ենթակառուցվածքների շարունակական զարգացմանը,*
- *մանկապատանեկան սպորտի զարգացմանը:*

Երիտասարդության բնագավառում Կառավարությունը նպատակ է հետապնդում

- *ակտիվացնել հասարակական կյանքում երիտասարդների մասնակցությունը,*
- *մեծացնել երիտասարդների զբաղվածության հնարավորությունները,*
- *աջակցել երիտասարդ ընտանիքներին:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *2020թ. կարտադրվեն թվով 20 նոր կինոնկարներ:*

- *2021թ. նախորդող երեք տարիների ընթացքում արտադրված կինոնկարներից 5-ը կմասնակցեն միջազգային կինոփառատոնների: Հայաստանում կկազմակերպվեն **6 միջազգային կինոփառատոններ**:*

- *2022թ. արվեստի ոլորտում իրականացվող նախագծերը կավելանան 10-ով (50-ից 60), միջազգային նախագծերին մասնակից արվեստագետների թիվը կաճի 20-ով (30-ից 50),իսկ մասնակից խբերի թիվը՝ 7-ով (18-ից 25):*



- *2021թ. հանրապետությունում իրականացվող միջազգային նախագծերը կավելանան 5-ով (23-ից 28):*

- *2020թ. կիրականացվի թանգարանային հավաքածուների և ոչ նյութական ժառանգության միջազգայնացման **8 նախագիծ**:*



- *Համայնքների ընդգրկվածություն մշակութային միջոցառումներին 2020թ. կկազմի **30%**՝ ներկա 20%-ի դիմաց:*

- *Հանրապետությունում ազգային, փողային և լարային նվագարանների տարածման մակադակը կաճի. 2023թ. նշված գործիքներին տիրապետող երախաների կշիռը ընդամենը երաժշտական կրթություն ստացող երեխաների մեջ կհասնի մինչև **44%-ի**՝ ներկա 34%-ի պայմաններում:*

- *Արխիվային տեղեկությունների էլեկտրոնային շտեմարանի կընդլայնվի՝ 155,000-ից մինչև 230,000 գործ:*



- *Մասնակցությունը միջազգային մարզական միջոցառումներին կաճի՝ 2,010 մասնակցից մինչև 2,073 մասնակցի: Նվաճումների թիվը ևս կաճի՝ նվաճված մեդալների քանակը 203-ից կհասնի 215-ի:*

- *Մասսայական սպորտային միջոցառումներին մասնակից ՀՀ և ԱՀ համայնքների քանակը կաճի 2%-ով և կկազմի **82%**:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում կկազմակերպվեն միջազգային նոր կինոփառատոններ: Նախատեսվում է, որ տարվա ընթացքում կկազմակերպվեն թվով 8 միջազգային կինոփառատոններ՝ նախորդ տարվա 5 փառատոնի դիմաց: Այս կապակցությամբ կինեմատոգրաֆիայի ծրագրին կհատկացվի 842.0 մլն դրամ՝ 2019 թվականի բյուջեով նախատեսված 815.2 մլն դրամի դիմաց:

842.0 մլն դրամ

Տեսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց կմատուցվեն գրահրատարակչական նոր ծառայություններ: Գրահրատարակչության և գրադարանների ծրագրով նախատեսվում է Բրայլյան տառատեսակով գրքերի տպագրություն, տետրերի պատրաստում և «Խոսող գրքերի» ձայնագրության ծառայություններ, որոնց կուղղվի 9.8 մլն դրամ:

9.8 մլն դրամ

Համերգային ծրագրեր, թատերարվեստի, օպերային և բալետի ներկայացումներ: Երաժշտական, պարային, համերգային կազմակերպությունների գործունեության ապահովմանը և համերգային ծրագրերի իրականացմանը, նաև թատերարվեստի, օպերային և բալետի ներկայացումներին ուղղվող ֆինանսավորման ծավալները կաճեն: Նվագախմբերի և պետական ազգային ակադեմիական երգչախմբի աշխատողներին կտրամադրվեն 700.0 մլն դրամ լրավճարներ:

+700.0 մլն դրամ

Կիրականացվեն թատրոնների շենքերի վերանորոգումներ: Թատրոնների մասնաշենքերի հիմնանորոգումների, ջեռուցման համակարգերի իրականացման, ներքին հարդարումների, տարածքի բարեկարգումների և նախագծումների իրականացմանը կուղղվի 307.3 մլն դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է գրեթե 7 անգամ:

307.3 մլն դրամ
(⬆x7)

Աշխարհի չեմպիոնների պատվովճարները կաճեն: Աշխարհի չեմպիոններին պատվովճարի հատկացումներին ուղղվող ծախսերը կաճեն 70.4 մլն դրամով: Ծախսերի աճը կապված է ինչպես պատվովճար ստացող չեմպիոնների ցանկում նոր շահառուների ընդգրկման, այնպես էլ պատվովճարի չափի ավելացման հետ: Աշխարհի չեմպիոնների պատվովճարը նախկին 55 հազարի փոխարեն դարձել է 100 հազար դրամ, օլիմպիական չեմպիոններինը՝ 100 հազարից՝ 200 հազար, նոր շահառուներ են օլիմպիական խաղերի մրցանակակիրները, շախմատի համաշխարհային օլիմպիադայի հաղթողները:

Ադապտիվ սպորտին առնչվող ծառայությունների ծախսերը կաճեն: 2020-ին Խուլերի ձյուդոյի աշխարհի առաջնությանը, Խուլերի ըմբշամարտի աշխարհի առաջնությանը և Պարափաուերլիֆտինգի աշխարհի գավաթին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցության ապահովմանը կուղղվի 14.4 մլն դրամ: 2020 թվականի Տոկիոյի պարալիմպիկ խաղերին Հայաստանի մարզական պատվիրակության մասնակցությանը կուղղվի 6.4 մլն դրամ: Միջոցառումը նոր նախաձեռնություն է:



Կաճեն «Երիտասարդության» ծրագրին ուղղվող միջոցները: Ծրագրին կուղղվի 1,533.3 մլն դրամ՝ 2019 թվականի 978.2 մլն դրամի դիմաց: Ծախսերի 555.1 մլն դրամով աճը պայմանավորված է մատչելի բնակարանների ձեռքբերման նպատակով հիպոթեքային վարկեր վերցնող շահառու երիտասարդ ընտանիքների թվի ավելացմամբ:

Բնակարանների ձեռքբերմանն ուղղվող երիտասարդ ընտանիքների աջակցությանը կուղղվի մոտ 2 անգամ ավել միջոցներ: «Երիտասարդ ընտանիքին մատչելի բնակարան» պետական նպատակային ծրագրի հատկացումները կկազմեն 1,220 մլն դրամ: Միջոցները նախատեսված են երիտասարդ ընտանիքների հիպոթեքային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը: Ծրագրից կարող են օգտվել առնվազն 5,640 երիտասարդ ընտանիքներ:



Համայնքների մշակութային հաստատությունների ֆինանսավորման ծավալները կրճատվել են: Նվազել են համայնքներին մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավմանն ուղղված ծախսերը 177.5 մլն դրամով: Մարզերի մշակութային զարգացման ծրագրի բյուջեն կրճատվել է 65 տոկոսով և կազմում է 95.8 մլն դրամ:

Համայնքների սպորտային հաստատությունների շենքային պայմանները կբարելավվեն: Այս նպատակին կուղղվի 2 մլրդ դրամ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ, ՍՊՈՐՏԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ աճը 2019թ. համեմատ)

Մշակույթ



Սպորտ և երիտասարդություն



- Արվեստների ծրագիր
- Մշակութային ժառանգության ծրագիր
- Գրահրատարակչության և գրադարանների ծրագիր
- Կինեմատոգրաֆիայի ծրագիր
- Մշակութային և գեղագիտական դաստիրակության ծրագիր
- Ազգային արխիվի ծրագիր
- Մարզերի մշակութային զարգացման ծրագիր
- Մեծ նվաճումների սպորտ
- Մասսայական սպորտ
- Երիտասարդության ծրագիր

Մշակույթի ծրագրերի բյուջեի 56.7 տոկոսը բաժին է ընկնում Արվեստների ծրագրին: Հաջորդում են «Մշակութային ժառանգության ծրագիրը» և «Գրահրատարակչության և գրադարանների ծրագիրը»: Արվեստների ծրագիրն առաջին դիրքում է նաև ֆինանսավորման ծավալների աճի առումով, վերջինիս ուղղվող միջոցները նախորդ տարվա ծավալները կգերազանցեն մոտ 1 մլրդ դրամով, աճը կկազմի 11.8 տոկոս:

Սպորտի և երիտասարդության ոլորտում իրականացվում են թվով երեք ծրագրեր, որոնց բյուջեի 38.4 տոկոսը բաժին է ընկնում «Մեծ նվաճումների սպորտ» ծրագրին: Աճի տեսանկյունից առանձնանում է «Մասսայական սպորտ» ծրագիրը, որին ուղղվող ֆինանսական ռեսուրսները ավելացել են ավելի քան երեք անգամ:

ՄԻԳՐԱՑԻԱ

Միգրացիոն ոլորտի զարգացման նպատակով կառավարությունը նախատեսում է՝

- ՀՀ-ում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց, նաև երկարաժամկետ միգրանտների ինտեգրման գործողությունների իրականացում,

- Օտարերկրյա պետություններից վերադառնալու ցանկություն ունեցող ՀՀ քաղաքացիներին խորհրդատվության տրամադրում և ինտեգրման աջակցություն,

- ՌԴ մուտքի արգելք ունեցող ՀՀ քաղաքացիների մուտքի արգելքի վերացման նպատակով աշխատանքների իրականացում,

- Միջազգային պաշտպանության կարիք ունեցող օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում ապաստանի տրամադրման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *ՀՀ-ում ապաստան հայցող և փախստական ճանաչված անձանց ինտեգրման ինդեքսը չի փոխվի և տարեվերջին կկազմի 20%:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Կտրուկ կաճեն փախստականների ինտեգրմանն ուղղված միջոցները:
2019թ. 84.4 մլն դրամի դիմաց 2020թ. այս հատկացումները կկազմեն 2,270 մլն դրամ:

Կմեկնարկի 1988-1992 թվականներին բռնագաղթված և ՀՀ ապաստանած փախստական ընտանիքների բնակարանային ապահովման նոր քաղաքականություն: Ի լրումն ապաստան հայցողներին դրամական փոքրածավալ օգնության տրամադրման, փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց բնակարանների վարձակալության ծախսերի փոխհատուցման, ինչպես նաև խորհրդատվական և քաղաքացիական կողմնորոշման վերապատրաստումների ծառայությունների, նշված շահառու ընտանիքների բնակարանային ապահովման աջակցությանը կուղղվի 2,169.7 մլն դրամ:

ՄԻԳՐԱՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Աջակցություն փախստականների ինտեգրմանը



Միգրացիոն բնագավառում պետական քաղաքականության մշակում և իրականացում



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈ

Բնագավառին ուղղված հատկացումները նպատակ ունեն ապահովել՝

- *Տեղեկատվական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային, մանկապատանեկան, գիտական, հայոց լեզվի և պատմության, մարզական, ժամանցային և հանրության համար կարևոր ու նշանակալից այլ տեղեկատվական բնույթի հաղորդումների բազմազանություն,*
- *Հեռուստառադիոծրագրերի հեռարձակման ոլորտում օրինախախտումների նվազեցում:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Հանրային հեռուստաընկերության Առաջին և Միջազգային ալիքներով օրիգինալ (նոր) հաղորդումների կշիռը հեռարձակվող հաղորդումների ընդհանուր եթերաժամանակի մեջ հասցնել **48-52%**՝ առկա 45-50% պայմաններում:*

- *Հանրային ռադիոընկերության Առաջին ծրագրի եթերում օրիգինալ (նոր) հաղորդումների կշիռը հեռարձակվող հաղորդումների ընդհանուր եթերաժամանակի մեջ հասցնել **45-48%**՝ առկա 42-45% պայմաններում:*
- *Ապահովել հանրային գոհունակության գնահատականի[1] **7-10 միավոր** մակարդակ (1-10 բալային համակարգում):*

[1]Մենագիտացված հասարակական կազմակերպությունների, լրատվամիջոցների և մշակութային կազմակերպությունների շրջանում անցկացված գնահատումների հիման վրա:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում ծրագրն կուղղվի 7,520 մլն դրամ՝ նախորդ տարվա մակարդակից ավել է 1.2 տոկոսով: **Հանրային հեռուստառադիոընկերության կառավարման, համակարգման և մոնիտորինգի ծառայություններին կուղղվի 146.9 մլն դրամ՝** նախորդ տարվա մակարդակից 2.3 տոկոսով պակաս:

6,056.6 մլն դրամ կուղղվի **Հանրային հեռուստաընկերության Առաջին ալիքի և Հանրային հեռուստաընկերության Միջազգային ալիքի** եթերում հեռուստահաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը: Յուրաքանչյուր ալիքում կապահովվի 8,784 ժամ հեռարձակում:

Ռադիոհաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը կուղղվի 962.1 մլն դրամ, որը նախատեսված է **Հանրային ռադիոընկերության «Առաջին ծրագրի», «Երկրորդ ծրագրի», «Հոգևոր-մշակութային», «Արևիկ», «Մշակույթ» և «Ժողովրդական ռադիո»** ռադիոալիքների հաղորդումների պատրաստմանը և հեռարձակմանը՝ յուրաքանչյուր ալիքով ապահովելով 8,784 ժամ հեռարձակում: Նախորդ տարվա համեմատությամբ հեռարձակման տևողությունը կաճի 24 ժամով: Մերձավոր Արևելքի և հարևան երկրներում հաղորդումների հեռարձակման տևողությունը կկազմի 823.5 ժամ, որը նախորդ տարվա տևողությունից քիչ է 362.75 ժամով:

Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառում քաղաքականության մշակման, իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության իրականացման ծառայություններին կուղղվի 315.9 մլն դրամ:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2019թ. և 2020թ., մլն դրամ



Հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի կանոնակարգում

Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակում

Կշիռն ընդամենը հեռուստատեսության և ռադիոյի բնագավառի ծրագրերի բյուջեում, 2020թ.



ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



Տնտեսական զարգացման նախաձեռնություններում կառավարությունը կարևորում է՝ քաղաքացիների նորարարական ներուժի, ստեղծագործելու ձիրքի և գործարար նախաձեռնողականության խրախուսումը, օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) ներգրավումը և տեխնոլոգիաների կլանումը:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

ՓՄՁ հատվածի կշիռը ՀՆԱ-ում **կաճի** և տարեվերջին կկազմի 27%:

Ապրանքների արտահանում/ՀՆԱ հարաբերակցությունը 19.7-ից **կաճի** և կկազմի 22.3%:



Աջակցություն ստացող մշակող արդյունաբերության կազմակերպությունների կողմից արտահանվող ապրանքների ծավալը **կաճի**:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում 2.1-ից **կաճի** մինչև 2.5%:

Հայաստանի գրավչությունը կբարձրանա. զբոսաշրջիկների քանակի տարեկան **աճը** կկազմի առնվազն 10%:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ներդրումների և արտահանման խթանմանը նախատեսվում է ուղղել նախորդ տարվա համեմատությամբ 32 տոկոսով ավել կամ 7,190.5 մլն դրամ ֆինանսական միջոցներ:

Արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներին նախատեսվում է հատկացնել 528.0 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ կրճատվել է 544.1 մլն դրամով՝ պայմանավորված Հայաստանի զարգացման հիմնադրամին ուղղված ռեսուրսների չնախատեսմամբ: Հիմնականում նախատեսվում են գործարար համաժողովներին կազմակերպում և մասնակցություն, մշակող արդյունաբերության ոլորտների ընկերություններին օժանդակության ցուցաբերում, հայկական ապրանքների առաջմղում:

Օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավման նպատակով ներդրումային և ՊՄԳ ծրագրերի զարգացման աջակցությանը կուղղվի 867.0 մլն դրամ: Ռեսուրսները կուղղվեն օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավմանը, ներդրողներին խորհրդատվության և աջակցության տրամադրմանը, օտարերկրյա ներդրումային ծրագրերին բաժնեմասնակցության ապահովմանը և ՊՄԳ ոլորտի զարգացման խթանմանը:

2020 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում է պետություն-մասնավոր գործընկերության կարգավորման իրավական շրջանակը:

Հայաստանում բիզնես սկսելու և ընդլայնելու մտադրություն ունեցող գործարարների համար շարունակվում են գործարարներին աջակցող **Regulations Armenia** նոր հարթակի ստեղծման աշխատանքները: Հարթակում քայլ առ քայլ նկարագրված են ներդրողների կողմից առավելապես պահանջված 18 ընթացակարգերը:

Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացում: 2019-ին մշակվել է ՓՄՁ զարգացման 2020-2024 թվականների ռազմավարությունը, որով նախատեսվում է պետական աջակցության գործիքների միջոցով ֆինանսական ռեսուրսների հասանելիության ավելացումը, ՓՄՁ սուբյեկտների կարողությունների և ձեռնարկատիրական մշակույթի զարգացումը, ՓՄՁ սուբյեկտների համար շուկաների հասանելիության ապահովումը, ՓՄՁ զարգացման համար բարենպաստ ինստիտուցիոնալ և իրավական միջավայրի ապահովումը:

ՀԲ վարկային միջոցներով (Առևտրի և ենթակառուցվածքների զարգացման ծրագիր, վարկային միջոցներ՝ 4,710.2 մլն դրամ, համաֆինանսավորում՝ 1,085.2 մլն դրամ) կշարունակվեն շենքերի և շինությունների հիմնանորոգման, սարքավորումների ձեռքբերման աշխատանքները: Ծրագրի շրջանակներում կմեկնարկի նոր նախաձեռնություն՝ **Արտահանողի զարգացման դրամաշնորհներ ծրագիրը,** որի նպատակն է արտադրանքից-արտահանում արժեշղթայում ծագած խնդիրների լուծումը: Ձեռներեցների համար կստեղծվեն համատեղ օգտագործման ռեսուրս կենտրոններ՝ լոգիստիկ կենտրոններ, տրանսպորտային միջոցներ, մարքեթինգի ծառայություններ, արտադրական հանգույցներ: Առաջնահերթությունը կտրվի գյուղատնտեսական, սննդի վերամշակման և տեքստիլի ընկերություններին:

2020թ. կկիրառվի սկսնակ գործարարներին վարկային երաշխավորությունների տրամադրման նոր մեխանիզմ: Արդյունքում կտրուկ կավելանա այս ուղղությամբ Ներդրումների աջակցության կենտրոնի կողմից տրամադրվող աջակցության հնարավոր շահառուների քանակը, ինչպես նաև տրամադրվող վարկային երաշխավորությունների սահմանաչափը 5 մլն ՀՀ դրամից կավելանա մինչև 7 մլն ՀՀ դրամ:

Փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցությանը նախատեսվում է հատկացնել 183.1 մլն դրամ, որն ուղղվելու է ՓՄՁ սուբյեկտների տեխնիկական, ֆինանսական և ներդրումային աջակցության ցուցաբերմանը: Տարվա ընթացքում ֆինանսական և ներդրումային աջակցություն կտրամադրվի գործող և սկսնակ 25-30 ՓՄՁ սուբյեկտների, իսկ ուսուցողական աջակցություն՝ 150-200 ՓՄՁ սուբյեկտների:

Զբոսաշրջության զարգացմանն ուղղվող ֆինանսական ռեսուրսները կաճեն: Զբոսաշրջության զարգացման ծրագրին կուղղվի մոտ 2 անգամ ավելի շատ դրամական միջոցներ, քան նախորդ տարի և կկազմի 6,304 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում Զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ կշարունակեն ՀՀ մարզերում կազմակերպվել ավանդական փառատոններ, կապահովվի Հայաստանի պաշտոնական տաղավարի ներկայությունը միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներում, Հայաստանի ճանաչելիության բարձրացման նպատակով կշարունակվեն Հայաստան հրավիրվել տարբեր թիրախային շուկաներից ԶԼՄ ներկայացուցիչներ և բլոգերներ՝ միջազգային լրատվամիջոցներում ապահովելու համար Հայաստանի մասին հոդվածների և դիտումների աճ:

ՀԲ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացում» ծրագրի շրջանակներում կսկսվի մեծածավալ շինարարություն զբոսաշրջային վայրերի բարեկարգման նպատակով, իրականացվում են **Հայաստանի 6 մարզերում զբոսաշրջային հիմնական ուղղություններ տանող ճանապարհների կամ զբոսաշրջավայրերին հարակից ենթակառուցվածքների նորոգման աշխատանքներ**: Ավարտվել է շինարարությունը Գառնիի «Քարերի սիմֆոնիա», Ստեփանավի Դենդրոպարկի, Գյումրու Կումայրու փողոցի, դեպի Տաթևի վանական համալիր տանող ճանապարհի զբոսաշրջային հանգույցներում: Ծրագրի նպատակն է նպաստել ընտրված մարզերի տեղական տնտեսություններում զբոսաշրջության աճին, նաև օգնել ստեղծել և հիմնել զբոսաշրջային շրջաններ, որոնք կմիացնեն ընտրված մարզերի բազմաթիվ վայրեր:

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը ներդրումների և տնտեսական զարգացման ծրագրերի բյուջեում)

Աճը 2019թ. համեմատ, %



- Տնտեսական զարգացման ծրագրերի բյուջեի 52.5 տոկոսն ուղղվում է «Ներդրումների և արտահանման խթանման ծրագրին», իսկ 46 տոկոսը՝ «Զբոսաշրջության զարգացման ծրագրին»:
- Զբոսաշրջության զարգացմանն ուղղված միջոցների աճն ամենամեծն է՝ 4,132.2 մլն դրամ կամ տնտեսական զարգացման ծրագրերի բյուջեի աճի 70.5 տոկոսը:
- Տնտեսական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 2,394.4մլն դրամ:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կառավարությունը նպատակադրվել է Հայաստանը դարձնել բարձր տեխնոլոգիական, արդյունաբերական երկիր, որին հասնելու ուղիներից է բարձր տեխնոլոգիաների, կապի, թվայնացման և ռազմարդյունաբերական համալիրի զարգացումը, գիտական և տեխնոլոգիական առաջընթացը:

ՄԺԾԾ ժամանակահատվածում քաղաքականությունը ուղղված է լինելու՝

պաշտպանական տեխնոլոգիաների զարգացմանը,

բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և սպարտափ ու ինժեներական էկոհամակարգի զարգացման միջոցով տաղանդի արտահոսքի կանխմանը և ներհոսքի ապահովմանը,

տնտեսության և կառավարման համակարգի թվայնացման, արտահանման ծավալների ավելացման և տնտեսական աճի ապահովման միջոցով ՀՀ քաղաքացիների կենսամակարդակի աճի նպաստին:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



- *Բարձր տեխնոլոգիական ոլորտում զբաղվածության 15% աճ,*



- *Բարձր տեխնոլոգիական ոլորտի շրջանառության 20% աճ,*
- *Հեռուստահեռարձակման եթերի մաքրության **92%** մակարդակ,*
- *ՀՀ բնակավայրերում **100%** թվային հեռուստահեռարձակում:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կմեկնարկի Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագիրը: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն կադրերի թիրախավորված պատրաստում և վերապատրաստում, կկազմակերպվեն բիզնես-դասընթացներ, կտրամադրվեն գիտական վերլուծությունների դրամաշնորհներ, կմշակվեն Սփյուռքի կարողությունների ներգրավման մեխանիզմներ: Ինժեներական քաղաքի կառուցումը, ազգային վենչուրային ֆոնդի ստեղծումը, տեխնոպարկերի զարգացումը, Հայկական ընկերությունների տեղեկատվական հարթակի ստեղծումը և միջազգային ցուցահանդեսների մասնակցության և վաճառքի մեխանիզմների ստեղծումը ևս այս ծրագրի շրջանակներում են:

Բարձր տեխնոլոգիաների ոլորտում կձևավորվի զարգացած և մրցունակ աշխատուժ: 2020-ից կսկսվեն համալսարանների և մասնավոր ընկերությունների համագործակցությամբ մասնագետների պատրաստման ծրագրեր, կկազմակերպվեն մասնագետների վերապատրաստման դասընթացներ, որոնք կիրականացվեն մասնավոր ընկերությունների ծրագրերով և մասնագետների միջոցով: Այս նպատակին կուղղվեն 200.0 մլն դրամ, մասնակիցների թիվը կկազմի շուրջ 3,000:

«Գաղափարից մինչև բիզնես» դրամաշնորհների տրամադրում: Համալսարանական, գիտահետազոտական խմբերին, նորաստեղծ ընկերություններին և ստարտափ ընկերություններին անհրաժեշտ թեմաների շուրջ աշխատանքներ իրականացնելու համար կտրամադրվեն դրամաշնորհներ, որոնց կուղվի 1,000.0 մլն դրամ: Դրամաշնորհներ կստանան, գիտահետազոտական 90 խմբեր և նորաստեղծ ընկերություններ, իսկ դրամաշնորհներ ստացող ստարտափ ընկերությունների թիվը կկազմի 20:

Կմեկնարկի «Հայկական վիրտուալ կամուրջ» նախաձեռնությունը: Նպատակն է Հայաստանը դարձնել տարածաշրջանում բարձր տեխնոլոգիական արդյունաբերական կենտրոն: 2020թ. պետական բյուջեի նախագծով նախատեսվում է հատկացնել 1,384.7 մլն դրամ: Արդյունքում 45 հայ ձեռներեց հնարավորություն կստանան այցելել «գիտության և նորարարությունների» կենտրոն՝ Սիլիկոնյան հովիտ, ստանալու ձեռնարկատիրական և բիզնես գիտելիքներ և հմտություններ: Աջակցություն կտրամադրվի Հայաստանի տարածքում տեխնոլոգիական կենտրոններին և նոր կենտրոնների ստեղծմանը, արտերկրից ստարտափերի ներհոսքի ապահովմանը:

Շուկաների զարգացում և միջազգային համագործակցության ընդլայնում: Բարձր տեխնոլոգիական ընկերությունների, ապրանքների և ծառայությունների արտերկրում պատշաճ ներկայացմանը և թիրախավորված վաճառքի խթանմանը կուղղվի 425.0 մլն դրամ: Հայկական ընկերությունները հնարավորություն կստանան մասնակցել միջազգային ցուցահանդեսներին, սեմինարներին, երկկողմ գործարար ֆորումներին, ներկայացնել իրենց արտադրանքը և ծառայությունները:

2020 թվականից սկսած պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտությունների ֆինանսավորման ծավալները շեշտակի կավելանան:. Ռազմարդյունաբերության զարգացման ուղղությամբ կավելանան նոր տեխնոլոգիական ուղղություններով գիտահետազոտական աշխատանքները: Հատուկ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների իրականացմանը կուղղվի 3,855.0 մլն դրամ՝ նախորդ տարվա համեմատ 1,010.8 մլն դրամով ավել, որն ուղղված է արտադրական հնարավորությունների զարգացմանը, նոր նմուշների մշակմանը, նոր և արդիականացված նմուշների փորձնական խմբաքանակների արտադրությանը:

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծ երում՝ կշիռն ընդամենը բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառի ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Իրականացվող ծրագրերից ամենամեծը դա Պաշտպանության բնագավառում գիտական և գիտատեխնիկական նպատակային հետազոտություններ ծրագիրն է, որի բյուջեն կազմում է 3,855.0 մլն դրամ և նախորդ տարվա նկատմամբ աճել է 32 տոկոսով:
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման ծրագրին բաժին է ընկնում ոլորտի ծրագրերի բյուջեի 41.3 տոկոսը կամ 3,009.7 մլն դրամ:
- Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության բնագավառում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծառայություններին կուղղվի 1,292.2 մլն դրամ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Տարածքային կառավարման քաղաքականության ոլորտում ՄԺԾԾ ժամանակահատվածում կարևորվում են՝

- *Հանրապետության տարածքային համաչափ զարգացումը և մարզերի տնտեսական զարգացման անհամամասնությունների մեղմումը, տնտեսական ակտիվության և աճի ապահովումը,*
- *Վարչատարածքային բարեփոխումների ապահովումը և համայնքների խոշորացման ծրագրերի իրականացումը, համայնքային ծառայության համակարգի զարգացումը,*
- *Համայնքային ենթակառուցվածքների գնահատումը և զարգացումը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Քաղաքային փողոցների լուսավորման միջին օրական տևողությունը 7.36 ժամից **կաճի** մինչև **8 ժամ**:*

- *Կխնայվի 750 Գվտ/ժամ էներգիա, ՋԴ արտանետումների քանակը կկազմի **75 տոննա**: (Երկու ցուցանիշներն էլ կմնան նախորդ տարվա մակարդակում)*

- *Սեյսմակայունության բարձր խոցելիության դպրոցների թիվը կնվազի 6-ով և կկազմի **420 դպրոց**:*

- *ՄԱԿ-ի երկրաշարժի ուժգնության սանդղակի 9 (IX) նշանագծի սեյսմակայունության չափանիշներին համապատասխանող դպրոցական շենքերում սովորող աշակերտների կշիռը 13.4-ից **կաճի** մինչև 14.1%,*



- *Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում վերապատրաստված աշխատակազմը 30%-ից **կաճի** և 2022թ. կկազմի 60%:*



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կշարունակվեն Երևանի արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքները: Երևանի արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման աշխատանքների իրականացման համար Երևանի քաղաքապետարանին կտրամադրվի 2,229.9 մլն դրամ պետական աջակցություն: Արտաքին լուսավորությամբ ապահովված փողոցների երկարությունը կկազմի 1,675 կմ, կամ 2020-ին կապահովվի լրացուցիչ 15 կմ փողոցային լուսավորություն:

Երևան քաղաքի թվով 28 փողոցների արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ կիրականացվեն: Արդյունքում արտաքին լուսավորության էլեկտրաէներգիայի սպառման ծավալն այս փողոցներում կկրճատվի 65 տոկոսով: Այս նպատակով կծախսվի 597.9 մլն դրամ:

Վերանորոգված փողոցների և բակերի տեսակարար կշիռը Երևանի փողոցների և բակերի ընդհանուր թվում կհասնի 90 տոկոսի: Կշարունակվեն Երևան քաղաքի փողոցների և մայթերի, բակային և միջբակային տարածքների ընթացիկ վերանորոգման աշխատանքները: Տարեվերջում կունենանք վերանորոգված թվով 600, իսկ ճաքալցված 200 փողոցներ, վերանորոգված մայթերի, բակային և միջբակային տարածքների թիվը կկազմի 700: Երևան քաղաքի փողոցների ընթացիկ նորոգման և ճաքալցման աշխատանքների իրականացման համար կտրամադրվի համապատասխանաբար 3,284.0 մլն դրամ:

Բաբաջանյան-Աշտարակ խճուղու նոր ճանապարհահատվածի կառուցման աշխատանքներն ամբողջությամբ կավարտվեն 2020 թվականին, իսկ Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի դեպքում՝ կիրականացվի աշխատանքների 80 տոկոսը: Բաբաջանյան-Աշտարակ խճուղու նոր ճանապարհահատվածի, նաև Արգավանդ-Շիրակ ճանապարհահատվածի (ներառյալ Հրազդան գետի վրա կամուրջի) կառուցման աշխատանքների շարունակմանը կուղղվի 9,233.8 մլն դրամ:

Երևանի էներգաարդյունավետության ծրագրի շրջանակներում աշխատանքներ կիրականացվեն Երևան քաղաքի մանկապարտեզների էներգաարդյունավետության և էներգախնայողության բարձրացման ուղղությամբ: Հիմնանորոգման, սեյսմիկ ամրացման և էներգաարդյունավետության միջոցառումներ կիրականացվեն Երևանի ենթակայության գործող 30 մանկապարտեզներում, ևս 140 մանկապարտեզում կիրականացվեն էներգաարդյունավետության միջոցառումներ:

Երևանի մետրոպոլիտեն: Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների սպասարկման որակի բարելավման և երթևեկության անվտանգության ապահովման նպատակով ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի նախագծով Երևանի քաղաքապետարանին նախատեսվում է հատկացնել 2,801.1 մլն դրամ: Երևանի մետրոպոլիտենի վերակառուցման աշխատանքների շարունակմանը կուղղվի 1,453.2 մլն դրամ՝ 372.6 մլն դրամով ավել 2019-ի համեմատությամբ: Մետրոպոիտենի ուղևորափոխադրումները 2020ին կկազմեն 18,850 հազար որից 1,600 հազարը կկազմեն արտոնյալ պայմաններով ուղևորափոխադրումները:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ: Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորափոխադրման ծառայությունների սուբսիդավորմանը կուղղվի 628.3 մլն դրամ: Վերգետնյա տրանսպորտով ուղևորափոխադրումները կկազմեն 4,333 հազար որից 867 հազարը կկազմեն արտոնյալ պայմաններով ուղևորափոխադրումները:

Գյումրու փողոցների կառուցում և լուսավորություն: Գյումրու ընտրված փողոցների (ներառյալ հետիոտնային անցումների ցանցը և ջրահեռացման համակարգը) վերակառուցմանը կուղղվի 6,953.5 մլն դրամ, իսկ Գյումրու փողոցային լուսավորության արդիականացմանը կուղղվի 2,263.1 մլն դրամ: Այս երկու ծրագրերի իրականացան արդյունքում ընդհանուր առմամբ կհիմնանորոգվի տարբեր չափերի 49 փողոց, փողոցների անձրևաջրերի հեռացման համակարգի 16,537.5մ՝ 1,324 հատ լուսակետ հենասյունով: Կներդրվի քաղաքի 147 փողոցների լուսավորության համակարգի ավտոմատ կառավարման համակարգ: Արդյունքում՝ հիմնանորոգված լուսակետերով փողոցների էլեկտրաէներգիայի ծախսը միջինում կկրճատվի մոտ 30 տոկոսով:

Նոր ձեռնարկությունների և աշխատատեղերի ստեղծում: Եվրոպական միության աջակցությամբ իրականացվող Հայաստանի տարածքային զարգացման դրամաշնորհային ծրագրի շրջանակներում ՀՀ մարզերում կստեղծվեն բարձր մրցունակ 336 ձեռնարկություններ և 544 ոչ գյուղատնտեսական աշխատատեղեր:

Տարածքային զարգացման ծրագրերի հիմնական գործընկերներն են ՀԲ-ն, ԱՄՆ ՄԶԳ-ն, E5P-ն, ՎԶԵԲ-ը, ԵՄ-ն, ԵՆԲ-ն: 2020թ. այս կազմակերպությունները տարածքային զարգացման ծրագրերին կուղղեն 32,452.5 մլն դրամ վարկային և 4,747.2 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ: Իրականացվող ծրագրերն ուղղված են՝

- ՀՀ մարզերի և համայնքների տարածքային և տեղական ինստիտուցիոնալ կարողությունների զարգացմանը,
- Դպրոցների շենքերի սեյսմակայունության բարձրացմանը,
- Երևանի մետրոպոլիտենի և քաղաքային տրանսպորտի ենթակառուցվածքների վերականգնմանը և բարելավմանը,
- Քաղաքային ենթակառուցվածքների, այդ թվում՝ Արգավանդ - Շիրակ, Դավիթաշեն - Աշտարակ ճանապարհահատվածի բարելավմանը,
- Գյումրի քաղաքում հիմնական ճանապարհների վերակառուցմանը և հանրային լուսավորության արդիականացմանը,
- Երևանում հուսալի լուսավորության ցանցի ստեղծմանը,
- Հայաստանում վարչատարածքային բարեփոխման միջոցով՝ ավելի մասնակցային, արդյունավետ և հաշվետվողական կառավարմանը,
- Համայնքային մակարդակի մոտ 120 ենթածրագրերի իրականացմանը (սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում և նոր օբյեկտների կառուցում):

Կբարելավվի հանրապետության դպրոցների սեյսմիկ անվտանգության մակարդակը. Ընդհանուր առմամբ նախատեսվում է 46 դպրոցների ուժեղացում կամ նորերի կառուցում: Առաջնահերթ կիրականացվեն թվով 20 գերակա դպրոցներից՝ 8 նոր դպրոցի կառուցման աշխատանքները (6-ը մարզերում, 2-ը Երևանում) և ևս 12 դպրոցի կառուցման շինարարական աշխատանքները: **Դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավմանը կուղղվի** 10,781.6 մլն դրամ՝ նախորդ տարվա 9,533.8-ի դիմաց, իսկ ծրագրի համակարգմանը՝ 98.9 մլն դրամ:

Աջակցություն սահմանամերձ համայնքներին: Սահմանամերձ 16 համայնքների (38 բնակավայրեր) տրամադրվող պետական աջակցությունը կկազմի 800.0 մլն դրամ՝ 2019-ի պետական բյուջեով հաստատված 928.9 մլն դրամի դիմաց, որով նախատեսվում է բնական գազի, էլեկտրաէներգիայի, ոռոգման ջրի, մարտական գործողությունների հետևանքով չօգտագործվող հողատարածքների հողի հարկի և անշարժ գույքի գույքահարկի գծով ծախսերի ամբողջությամբ կամ մասնակի փոխհատուցում:

Համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցման նպատակով 502 համայնքների կտրամադրվեն դոտացիաներ: Ֆինանսական համահարթեցման նպատակով համայնքներին տրամադրվող դոտացիաները կկազմեն 55,378.5 մլն դրամ:

Ենթակառուցվածքների զարգացման նպատակով ՀՀ մարզերին նախատեսվում է հատկացնել 10,000.0 մլն դրամ սուբվենցիաներ:

Պետական կառավարման ռեսուրսների բաշխումը ըստ մարզերի



ՀՀ մարզերում տարածքային պետական կառավարման ծրագրերին կուղղվի 6,322.1 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատ նվազել է 50 մլն դրամով:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ
(փակագծերում՝ կշիռն ընդամենը տարածքային կառավարման ծրագրերի բյուջեում)

Աճը 2019թ. համեմատ, %



Տարածքային կառավարման ոլորտում քաղաքականության մշակմանը, ծրագրերի համակարգմանը և մոնիտորինգի իրականացմանը կուղղվի 1,481.5 մլն դրամ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

1. ՏՐԱՆՍՊՈՐՏ

Ճանապարհային քաղաքականության բնագավառում *ՄԺԾԾ ժամանակահատվածում սահմանվում են հետևյալ առաջնահերթությունները՝*

- ***Միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների որակի շարունակական բարձրացում,***
- ***Ճանապարհային կահավորանքի բարելավում,***
- ***Ճանապարհային անվտանգության պահանջները միջազգային նորմերին համապատասխանեցում,***
- ***«Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի կառուցման շարունակություն:***



Երկաթուղու բնագավառում առաջնահերթություններն են՝

- ***Երկաթուղային ենթակառուցվածքի և երկաթուղային ցանցի առանձին հատվածներում արհեստական կառույցների (կամուրջների, թունելների և այլ) հիմնանորոգումը, վերակառուցումը և արդիականացումը,***
- ***Երկաթուղային շարժակազմի նորացումը:***

Ավիացիայի *բնագավառում կարևորվում են՝*

- ***Թռիչքային և ավիացիոն անվտանգության մակարդակների համապատասխանեցումը եվրոպական և միջազգային ստանդարտներին,***
- ***Հավասար մրցակցային պայմանների ապահովումը ՀՀ-ից և դեպի ՀՀ օդային փոխադրումներ իրականացնող ավիափոխադրողների համար:***

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ***Համայնքների տրանսպորտային կապի ցուցանիշը[1] 65.92-ից կաճի 68%-ի:***



- ***Միջպետական և հանրապետակա անհարթության IRI գործակիցները[2] չեն փոխվի և կկազմեն համապատասխանաբար 6.3 և 7.6 մ/կմ:***
- ***Համաձայնեցված ծավալով երկաթուղային երթուղիների թիվը կմնա հաստատուն՝ թվով 9 երթուղի:***



[1]Հիմնական ճանապարհային ցանցի կամ մարզկենտրոնների հետ առնվազն մեկ բավարար կամ ավելի լավ վիճակում գտնվող ճանապարհներ ունեցող բնակավայրերի մասնաբաժին:

[2]Ճանապարհների ծածկի անհարթության միջինացված գործակից:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ճանապարհային ցանցի բարելավումներին և երթևեկության անվտանգության ապահովմանն ուղղվող միջոցները 2020թ. կաճեն մոտ 2 անգամ: Երթևեկության ինտենսիվության աճի, ուղևորափոխադրումների ու բեռնափոխադրումների անվտանգության և արդյունավետության ապահովման նպատակով 2020 թվականին նախատեսվում է իրականացնել միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ու տրանսպորտային օբյեկտների հիմնանորոգում և նորոգում: 2020թ. պետական բյուջեով նախատեսված է 2019թ. համեմատությամբ մոտ 2 անգամ ավել միջոցներ՝ 83,308.2 մլն դրամ:

Միջպետական և հանրապետական նշանակության ճանապարհների բարելավում: Նախատեսվում է իրականացնել 3,002.5 կմ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ամառային պահպանման և 3,477.6 կմ ձմեռային պահպանման, ինչպես նաև երեք թունելների և հինգ կամուրջների պահպանման ու շահագործման աշխատանքներ: Այս նպատակին նախատեսված է ուղղել 10,377.0 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված 9,882.9.0 մլն դրամի դիմաց:

Մարզային նշանակության ավտոճանապարհների բարելավում: Կիրականացվեն 1,265.9կմ մարզային նշանակության ավտոճանապարհների ընթացիկ նորոգման և 2,184.2կմ ձմեռային պահպանման աշխատանքներ: Այս ծառայություններին նախատեսվում է հատկացնել 1,396.5 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված 1,330.0 մլն դրամի դիմաց, կամ ավել 66.5 մլն դրամով:

Միջպետական՝ հանրապետական և մարզային նշանակության ավտոճոնապարհների քայքայված ծածկի վերանորոգմանն ուղղվող հատկացումները կաճեն 2.5 անգամ: 2020թ. ավտոճանապարհների ծածկի վերանորոգմանը կուղղվի 21,559.6 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված 8,627.5 մլն դրամի դիմաց:

Վարկային և դրամաշնորհային միջոցներով կշարունակվեն հիմնանորովգել և կառուցվել հանրապետության ճանապարհները և ճանապարհային ենթակառուցվածքները: Մասնավորապես, 2020-ին 37,052.5 մլն դրամ վարկային և 944.1 մլն դրամ դրամաշնորհային միջոցների հաշվին կշարունակվեն իրականացվել՝

- Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի վերակառուցման աշխատանքները,
- Մ6 Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահմանի 92 կմ ընդհանուր երկարությամբ միջպետական ճանապարհի հիմնանորոգումը և վերակառուցումը,
- Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավման ծրագրերը՝ շուրջ 251 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհահատվածների հիմնանորոգում,
- Բագրատաշեն սահմանային հսկողության անցակետի տարածքում նոր կամուրջի կառուցումը և այլն:

2. ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԺԾԾ ժամանակահատվածում խմելու և ոռոգման ջրերի մատակարարման, ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման աշխատանքների բարելավման գերակա ուղղություններն են՝

- *Ջրամատակարարման շարունակականության և ջրի որակի բարելավման ապահովումը,*
- *Ջրային համակարգերի վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,*
- *Համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության և հուսալիության բարձրացումը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Ոռոգման ջրի կորուստը **կկրճատվի** 56.15-ից մինչև 56.02%,* 56.15% → 56.02%
- *Փաստացի ոռոգվող հողատարածքների մակերեսի կշիռը ոռոգելի հողատարածքների մակերեսում **կաճի** 53-ից մինչև 55%,* 53% → 55%
- *Փաստացի ոռոգվող հողատարածքի հաշվով ոռոգման ջրի օգտագործման ծավալը **կկրճատվի** 5.85-ից մինչև **5.8 խմ/հա**,*
- *Սևանա լիճ տեղափոխված ջրի ծավալը կկազմի 120-150 մլն խ.մ, իսկ տեղափոխված ջրի արդյունքում Սևանա լճի մակարդակի աճի գնահատականը **9-12սմ**,*
- *Խմելու ջրի մշտապես հասանելիություն ունեցող բնակչության մասնաբաժինը **կաճի** 97.9-ից 98.0%,* 97.9% → 98%
- *Կոյուղու հասանելություն ունեցող բնակչության մասնաբաժինը **կաճի** 69.7-ից 70.0%,* 69.7% → 70%
- *Ջրի կորուստները ջրամատակարարման համակարգում **կկրճատվեն** 76.5-ից **76.3**%:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Ֆինանսական աջակցություն ոլորտի ընկերություններին: Ոռոգում-ջրառ իրականացնող կազմակերպությունների կտրամադրվի պետական աջակցության՝ վերջիններիս համար հաստատված սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ 1,089.3 մլն դրամ: Ոռոգման ոլորտի սուբսիդավորում կիրականացվի նաև ՋՕԸ-ների համար սահմանված ոռոգման ջրի սակագնի և նվազագույն շահավետ գնի տարբերության չափով՝ 2,856.0 մլն դրամ: Ֆինանսական կենսունակության բարելավման նպատակով ոռոգման համակարգի 16 ընկերություններին կտրամադրվի 1,795.8 մլն դրամ ֆինանսական աջակցություն:



Կսկսվեն ոռոգման համակարգերի ջրանցքների բաժանարար կետերը SCADA համակարգով հագեցած ջրաչափական սարքավորումներով կահավորման աշխատանքները: Այս միջոցառմանը նախատեսվում է հատկացնել 360.0 մլն դրամ՝ 486 ջրաչափական սարքավորումներ տեղադրելու համար:



Հեր-Հերի ջրատարի կառուցում. Հեր-Հերի ջրամբարից կկառուցվի ինքնահոս ջրատար, որին կհատկացվի 54.3 մլն դրամ:

Ոռոգման ոլորտում հիմնական գործընկերները/դոնորներն են Գերմանիայի զարգացման վարկերի բանկը, Եվրասիական զարգացման բանկը, Ֆրանսիայի կառավարությունը, Զարգացման ֆրանսիական գործակալությունը: 2020թ. վարկային և դրամաշնորհային աջակցությունը կկազմի համապատասանաբար՝ 20,711.3 մլն դրամ և 796.7 մլն դրամ: Այս աջակցության շրջանակներում 2020թ. կիրականացվեն ոռոգման համակարգերի կառուցման, բարելավման և արդիականցման մի շարք միջոցառումներ, մասնավորապես՝

- Վեդու ջրամբարի և ինքնահոս ոռոգման համակարգի կառուցում,
- Ոռոգման համակարգի ռազմավարության մշակման, ոռոգման համակարգի գույքագրման և վերագնահատման, ներդրումային կարիքների գնահատման, ջրի և կորուստների կառավարման և այլ գործառույթներ,
- Ոռոգման ցանցերի հիմնանորոգում և կառուցում,
- Ախուրյան գետի վրա, գյուղատնտեսական նպատակներով արդյունավետ ոռոգման համակարգի ստեղծում,
- Ջրածոր գյուղի վերաբնակեցման (Ախուրյան գետի ջրային ռեսուրսների ինտեգրացված կառավարում ծրագրի շրջանակներում) համար խորհրդատվական և կառավարման ծառայությունների մատուցում, ենթակառուցվածքների և բնակելի տների կառուցում:

Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման և զարգացման ծրագրեր են իրականացվում Եվրոպական ներդրումային բանկի, Գերմանիայի զարգացման վարկերի բանկի և Եվրոպական միության հարևանության ներդրումային գործիքի աջակցության շրջանակներում: Կիրականացվեն հետևյալ ծրագրերը՝

- Երևան քաղաքի ջրամատակարարման ցանցի վերակառուցման և ջրահեռացման համակարգերի բարելավում,

- 6 քաղաքների և 37 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հրատապ վերականգնման աշխատանքներ, ինչպես նաև թվով 3 ջրամբարների կառուցման աշխատանքներ,

- Ջրամատակարար ընկերությունների կողմից դուրս մնացած 560 գյուղական բնակավայրերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնում, կեղտաջրերի մաքրման կայանի կառուցում, ինչը թույլ կտա Արմավիր, Մեծամոր քաղաքների ու Նորապատ համայանքի կեղտաջրերի մաքրման աշխատանքներ իրականացնել:

  2020թ. այս ծրագրերին ուղղվող վարկային և դրամաշնորհային միջոցները համապատասխանաբար կկազմեն 5,354.7 մլն դրամ և 6,804.9 մլն դրամ:

3. ԿՈՇՏ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

ՄԺԾԾ ժամանակահատվածում կոշտ թափոնների կառավարման բնագավառում կարևորվում են՝

- ***ՀՀ բնակավայրերում աղբահանության բարելավման ապահովումը,***

- ***Կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի զարգացումը:***

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Թափոնների հավաքման ծածկույթը չի փոխվի և կկազմի 16%:



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Երևանում փակման ենթակա աղբավայրերի փակում և նոր աղբավայրերի ստեղծում: Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգի բարելավմանը և նոր աղբավայրի ստեղծմանը տարբեր բյուջետային միջոցառումներով կուղղվի 4,355.0 մլն դրամ, որը նախորդ տարվա ծավալը գերազանցում է մոտ 3 անգամ:

29 հա տարածքում կկառուցվի եվրոպական չափորոշիչներով նոր քաղաքային աղբավայր (կիրականացվի աշխատանքների 60 տոկոսը), կներկայացվեն գործող թվով 2 աղբանոցների (Նուբարաշեն և Աջափնյակ) մեկուսացման վերջնական նախագծերը, և քաղաքային նոր աղբավայրի կառուցման վերջնական նախագիծը, կստեղծվեն աղբահանություն իրականացնող կազմակերպությունների մեքենաների համար աղբի տեղադրման 150 մեքենա/օր հնարավորություններ:



ՀՀ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կստեղծվի նոր մեկ աղբավայր: Աղբավայրը կստեղծվի Կոշտ կենցաղային թափոնների կառավարման ծրագրով: Կառուցապատման աշխատանքները մեկնարկել են: Շահագործվող աղբանոցների թիվը կկրճատվի 30 տոկոսով: Ծրագրին 2020թ. ընդամենը կուղղվեն մոտ 3,053 մլն դրամ միջոցներ, նախորդ տարվա համեմատությամբ 44 տոկոսով ավել: Ծրագիրն ընդգրկում է 97 համայնք:

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի, Արևելյան Եվրոպայի էներգախնայողության և բնապահպանական գործընկերության ֆոնդի, Եվրապական միության և Եվրոպական ներդրումային բանկի ֆինանսական աջակցությամբ իրականացվում են ծրագրեր ուղղված՝

- Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում կոշտ կենցաղային թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, նոր աղբավայրի կառուցմանը,
- Կոտայքի մարզի կոշտ կենցաղայաին թափոնների վերամշակմանը,
- Երևանում կոշտ թափոնների կառավարման համակարգի բարելավմանը, այդ թվում՝ նոր աղբավայրի կառուցում, շահագործում և վերամշակման ծավալների ավելացմանը նպաստող համակարգերի ներդրում:

2020թ. այս խնդիրներին կուղղվի 9,744 մլն դրամ վարկային և 3,881.6 մլն դրամ դրամաշնորհային միջոցներ:

4. ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Էներգետիկայի բնագավառի զարգացման ուղղություններն են՝

- *Սեփական վերականգնվող էներգապաշարների պոտենցիալի իրացումը,*
- *Էլեկտրաէներգիա արտադրող հզորությունների ստեղծումը և արտահանման կողմնորոշում ունեցող էներգահամակարգի կառուցումը,*
- *Ատոմային էներգետիկայի զարգացումը, էներգաբլոկի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացումը, նոր ատոմային էներգաբլոկի կառուցման նախապատրաստական աշխատանքների իրականացումը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Էլեկտրահաղորդման օդային գծի տարեկան անջատումների քանակը **կկրճատվի** 14-ից մինչև **2 դեպք**,*
- *Ենթակայանների սարքավորումների խափանումների տարեկան քանակը **կկրճատվի** 33- ից մինչև **6 դեպք**,*
- ***Կկրճատվի** անջատումների միջին տարեկան հաճախականության հոսանքազրկումների քանակ/բաժանորդների թիվ հարաբերակցությունը՝ 0.31-ից մինչև 0.14,*
- *Ագարակ-2 և Շինուհայր ենթակայանների թողունակությունը **կաճի** 250-ից մինչև 380 ՄՎԱ,*
- *Վերակառուցվող հայկական ԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի կողմից էներգահամակարգին մատակարարվող էլեկտրաէներգիայի ծավալը 2400-ից **կաճի** մինչև առնվազն **2800 մլն ԿՎտ/ժ**:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Էներգետիկայում երեք խոշոր գործընկերների (ՎՋԲ, ԱՋԲ և ՌԴ) վարկային և դրամաշնորհային աջակցության շրջանակներում կշարունակեն իրականացվել էլեկտրոմոտակարարման հուսալիության բարձրացման, ոլորտի ֆինանսական առողջացման, էլեկտրահաղորդման ցանցի բարելավման մի շարք ծրագրեր: Մասնավորապես՝

- Շուրջ 50 կմ երկարությամբ «Լալվար» և «Նոյեմբերյան» օդային գծերի վերակառուցում,
- «Հաղթանակ», «Չարենցավան-3», «Վանաձոր-1», «Աշնակ», «Ագարակ-2» և «Շինուհայր» ենթակայանների վերակառուցում,
- Նախատեսվում է վերակառուցել 40 և ավելի տարիներ շահագործման մեջ գտնվող «Զովունի» և «Արարատ-2» ենթակայանները,
- Կարգավորման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնում,
- Իրականացվում են ՀԱԷԿ-ի 2-րդ էներգաբլոկի շահագործման նախագծային ժամկետի երկարացման աշխատանքներ,
- Հայկական ատոմային էլեկտրակայանի 2-րդ էներգաբլոկի անվտանգության մակարդակի բարձրացման աշխատանքներ:

2020թ. այս ծրագրերին ուղղվող վարկային և դրամաշնորհային միջոցները համապատասխանաբար կկազմեն 26,209.2 մլն դրամ և 3,516.5մլն դրամ:

ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ





ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ագրարային հատվածում կառավարության կողմից իրականացվող քաղաքականությունը նպատակաուղղված է.

- *Գյուղատնտեսության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական արժեշղթայում ընդգրկված սուբյեկտների եկամուտների ավելացմանը,*
- *Երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը:*

ԱԳՐՈՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ՝



ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (2022թ.)

- *2019 թվականի նկատմամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքը **կաճի 15%**-ով:*
- *Գյուղատնտեսական մթերք մատակարարող տնտեսավարող սուբյեկտների թիվը **կաճի**:*

800 → 1,500

- *Անմշակ վարելահողերի կշիռը չի գերազանցի **30%**-ը՝ 45.5%-ի դիմաց:*
- *Ոռոգվող վարելահողերի կշիռը կգերազանցի **40%**-ը՝ 26%-ի դիմաց:*
- *Պետական աջակցությամբ ոռոգման արդիական համակարգեր ներդրված հողատարածքները 1,900 հա-ից կաճեն և 2023թ.կկազմեն 9,100 հա:*

1,900 → 9,100

- *Պտուղբանջարեղենի և խաղողի վերամշակումից ստացված արտադրանքի ծավալները կաճեն **5%**-ով:*
- *Մշակաբույսերի միջին բերքատվությունը կաճի **5%**-ով:*
- *Հացահատիկի և հատիկաընդեղենի արտադրության ծավալները կաճեն մոտ **20%**-ով:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեծ ծավալներով կավելանան տարբեր նպատակներով գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծավալները: Գյուղական համայնքներում վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացմանն ուղղված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը կուղղվի **2,151.0 մլն դրամ**:

Գյուղատնտեսական հումքի մթերումների նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծավալները կկազմեն **998.9 մլն դրամ:** Նպատակը գյուղատնտեսական մթերքների գնման դիմաց գյուղացիական տնտեսություններին վճարումների ժամանակին կատարումն է, գյուղատնտեսական մթերքների վերամշակումից ստացվող արտադրանքի մրցունակության, արտադրության ու արտահանման ծավալները աճը:



Կաճեն ժամանակակից տեխնոլոգիաներով վերամշակվող խաղողի և ինտենսիվ պտղատու այգետարածքները և հատապտղանոցները: Պլանավորվում է, որ առաջիկա տասնամյակում դրանք գրեթե կկրկնապատկվեն և կկազմեն 2,557 հա: Ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ այգիների հիմնման համար վարկային տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել **384.3 մլն դրամ**՝ նախորդ տարվա համեմատ ավել է 134.3 մլն դրամով: 2020-ից կիրականացվի նաև կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում, որին նախատեսվում է հատկացնել **67.1 մլն դրամ**:

Հայկական գինու ճանաչելիության բարձրացման, գինեգործական արտադրանքի որակի բարելավմանը, վաճառքի ծավալների ընդլայնման և արտահանման ծավալների ավելացման ծառայություններին կուղղվի **300.0 մլն դրամ**:



Շարունակվում է խրախուսվել կարկտապաշտպան ցանցերի ներդրումը: Այս նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել **229.8 մլն դրամ**՝ 2019 թվականին հաստատված 199.6 մլն դրամի դիմաց:

Հանրապետության գյուղատնտեսական տեխնիկան աստիճանաբար կնորացվի, ագրոպարենային ոլորտը կվերազինվի նոր սարքավորումներով: Տնտեսավարողներին մատչելի պայմաններով գյուղատնտեսական տեխնիկայի և անասնաբուծության, բուսաբուծության, ջերմոցային, սառնարանային տնտեսություններում օգտագործվող սարքավորումների ապահովման նպատակով գյուղատնտեսական տեխնիկայի և ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցությանը կուղղվի **642.9 մլն դրամ**:

Կառավարությունն աջակցում է ջերմոցային տնտեսությունների ներդրմանը: Փոքր և միջին ջերմոցային տնտեսությունների ներդրման պետական աջակցությանը նախատեսվում է հատկացնել **1,125.0 մլն դրամ**, որը կուղղվի գյուղատնտեսությունում տնտեսավարողների կողմից փոքր և միջին ջերմատների կառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման ծախսերի մասնակի փոխհատուցմանը:

Աճել են ոռոգման արդիական համակարգերի ներդրման աջակցության ծավալները: Ոռոգման արդիական համակարգերի ներդրման նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը նախատեսվում է հատկացնել **412.5 մլն դրամ՝** 2019թ. բյուջեով նախատեսված 312.1 մլն դրամի դիմաց: Միաժամանակ 2020թ-ին նախատեսվում է նաև ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորում՝ **140.2 մլն դրամ**, կիրականացվի կատարված ծախսերի մասնակի փոխհատուցում:

Սերմնաբուծության զարգացում: Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանը կուղղվի **195.0 մլն դրամ**, որի արդյունքում կավելանան հանրապետության տարածքում արտադրվող բարձր վերարտադրության հացահատիկային, հատիկընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնանյութի արտադրական ծավալները, կբարձրանա տեղական սերմնանյութով ինքնաբավության մակարդակը:

Մեկնարկում են անասնապահության խրախուսման նոր նախաձեռնություններ: Տավարաբուծության զարգացմանը նախատեսվում է հատկացնել 200.5 մլն դրամ: Միջոցառման նպատակը տավարաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման միջոցով տոհմային ԽԵԿ-ի մատակարարումն է:

Անասնապահության խրախուսման միջոցառումների արդյունքում 2020թ. վաճառված կովերի թիվը պլանավորվում է հասցնել մինչև 33,000 գլխի, իսկ մեկ կովի կաթի միջին արտադրությունը մինչև 1,700 լիտր/տարի: Մինչև 2024թ. տոհմային կենդանիների տեսակարար կշիռը 0.5-ից կաճի մինչև 5 տոկոս:

Շարունակվում է Խելացի անասնաշենքերի կառուցման աջակցությունը: Փոքր և միջին Խելացի անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցությանը կուղղվի **630.0 մլն դրամ**:

Խրախուսվում է տոհմային գործի զարգացումը: Ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման նպատակով բարձրարժեք տոհմային ոչխարների և այծերի ձեռքբերան և բարձր մթերատու հոտերի ձևավորման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորմանը և տնտեսավարողների կատարված ծախսերի փոխհատուցմանը նախատեսվում է հատկացնել համապատասխանաբար **364.1 մլն** և **310.5 մլն դրամ**: Պլանավորվում է 2020թ. վաճառված ոչխարների թիվը կհասնի մինչև 67,000 գլխի:





Կիրականացվեն խոշոր եղջերավոր կենդանիների համատարած համարակալման և հաշվառման աշխատանքներ:
Խոշոր եղջերավոր կենդանիների հաշվառման միջոցառումներին կուղղվի **750.0 մլն դրամ**: Նպատակը՝ հաշվառման և անձնագրավորման համակարգի ներդրումն է:

Կապահովվի գյուղատնտեսական կենդանիների վարակամերժության 90 տոկոս մակարդակ: Անասնաբուժական ծառայություններին կուղղվի **2,616.2 մլն դրամ**, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 53 տոկոսով:



ՀԲ աջակցությամբ իրականացվող Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ ծրագրի շրջանակներում շարունակվում է **անասնապահական ուղղվածություն ունեցող համայնքներին արոտօգտագործման / անասնապահական առավել մրցունակ և կայու համակարգերի ստեղծման աջակցությունը** (վարկային միջոցներ՝ 2,142.4 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 62.5 մլն դրամ):

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի և ՕՊԵԿ զարգացման միջազգային հիմնադրամի աջակցությամբ շարունակվում է իրականացվել «**Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն»** ծրագիրը, որի նպատակն է նվազեցնել գյուղական աղքատությունը Հայաստանում և ստեղծել ավելի բարեկարգ սոցիալական և տնտեսական ենթակառուցվածքներ (վարկային միջոցներ՝ 643.2 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 162.0 մլն դրամ): Ծրագրի շրջանակներում ստեղծված աշխատատեղերի քանակը 2022թ կհասնի 1,450-ի, ոռոգման համակարգերը կվերականգնվեն 3,200 հա հողատարածքների վրա, կբարելավվի 25 համայնքների ջրամատակարարումը:

Դրամաշնորհային ծրագրերի միջոցով (դրամաշնորհներ՝ 1,636 մլն դրամ: ՀՀ համաֆինանսավորում՝ 384.2 մլն դրամ) ոլորտում իրականացվում են մի շարք միջոցառումներ ուղղված՝

- Վայոց ձորի, Արարատի և Սյունիքի մարզերի ագրոէկոլոգիական առումով առավել ռիսկային տարածքների բնակիչների ընդհանուր կարողությունների զարգացմանը:
- Ոլորտում մոնիթորինգի և գնահատման կարողությունների ամրապնդմանը:
- Գյուղական աղքատության կրճատմանը:
- Ապահովագրական համակարգի աստիճանական ներդրման նախադրյալների ստեղծմանը:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը գյուղատնտեսական ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր
- Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում
- Գյուղատնտեսության խթանման ծրագիր
- Անասնաբուժական ծառայություններ
- Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն
- Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն
- Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ

Գյուղատնտեսական ծրագրերի բյուջեի ավելի քան 71 տոկոսն ուղղվում է ոլորտում իրականացվող երեք ծրագրերին, դրանք են՝ «Գյուղատնտեսության արդիականացման ծրագիրը», «Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում» ծրագիրը և «Գյուղատնտեսության խթանման ծրագիրը»:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Շրջակա միջավայրի կառավարման քաղաքականությունն ուղղված է շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների համալիր պահպանությանը, բարելավմանը, վերականգնմանը և ողջամիտ օգտագործմանը՝ հավասարակշռելով սոցիալական արդարության և տնտեսական արդյունավետության հետ:

Ոլորտային ծախսային գերակայություններն են՝

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

*Որսագողության մակարդակը **կկրճատվի 23%**-ով (2022թ.):*

*Կառավարելի անտառային տարածքներում արձանագրվող անօրինական անտառհատումները **կկրճատվեն** մոտ **3 անգամ** և 2022թ.կկազմեն մինչև 1000 ծառ:*

*Բնական վերաճի մասնաբաժինը կառավարվող անտառային տարածքներում 8%-ից **կաճի** մինչև **10%**:*

Շրջակա միջավայրի բաղադրիչների վիճակի վերաբերյալ մշակվող տեղեկատվություն:



Բնագիտական նմուշների հանրայնացման և էկոկրթական նախագծերի քանակ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ



Կմաքրվի Սևանա լճի շրջակայքի 271 հա ջրածածկ անտառտնկարկներ: Այս միջոցառման իրականացմանը կուղղվի **208.2 մլն դրամ**՝ 2019թ. չափաքանակի՝ 117.1 մլն դրամ, համեմատ ավել է 91.2 մլն դրամով:

Կիրականացվի Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների հաշվառում: Սևանա լճի ջրահավաք ավազանի կենդանական ռեսուրսների՝ ձկան և խեցգետնի, պաշարների հաշվառման աշխատանքներին նախատեսվում է հատկացնել **7.6 մլն դրամ**:

Բնության հատուկ պահպանվող տարածքների գործունեության ապահովում: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ «Սևան», «Դիլիջան», «Արևիկ» և «Արփի լիճ» ազգային պարկեր, «Խոսրովի անտառ» և «Շիկահող» պետարգելոցներ, «Սոսիների պուրակ», «Խուստուփ», «Զանգեզուր» և «Զիկատար» պետական արգելավայրեր, դենդրոպարկեր և բնության հատուկ պահպանվող այլ տարածքներ, պահպանությանը, անտառային տարածքների խնամքի և բնապահպանական այլ աշխատանքների և գիտական ուսումնասիրությունների իրականացմանը նախատեսվում է հատկացնել **1,031.4 մլն դրամ**՝ 173.3 մլն դրամով ավել նախորդ տարվա ծավալներից:

Շարունակվում է Գերմանիայի զարգացման վարկերի բանկի (KFW) կողմից տրամադրվող «Կովկասի պահպանվող տարածքների աջակցության ծրագիր - Հայաստան դրամաշնորհային ծրագիր: Ծրագրի իրականացումը կնպաստի Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում կենսոլորտային տարածքի ստեղծմանը: 2020թ. նախատեսվում է **1,586.4 մլն դրամ** (այդ թվում դրամաշնորհային միջոցներ՝ 1,321.9 մլն դրամ, ՀՀ համաֆինանսավորում՝ 264.4 մլն դրամ):

Անտառների պահպանմանն ուղղվող ռեսուրսները կաճեն: Անտառների պահպանմանը կուղղվի 1,335.5 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմտությամբ ավել է 208.8 մլն դրամով: Անտառպահպանման ծառայություններին ուղղված են ապօրինի հատումների ու բնափայտի տեղափոխման, իրացման, անտառածածկ տարածքների և բնափայտի պաշարների, անտառների և անտառային հողերի քանակական ու որակական փոփոխությունների, անտառային հրդեհների, հիվանդությունների և վնասատուների տարածվածության և այլ բացասական գործողությունների կանխարգելմանը: Անտառպահպանական ծառայություններ կմատուցվեն «Հայանտառ» ՊՈԱԿ-ի իրավասության ներքո գտնվող անտառային 342,400 հա տարածքներում:

Կվերականգնվի 150 հա անտառ: Անտառվերականգնման և անտառապատման աշխատանքներին հատկացումները կկազմեն 413.8 մլն դրամ՝ 150 հա վրա անտառվերականգնման և անտառապատման աշխատանքների իրականացման համար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ
(փակագծերում՝ կշիռն ընդամենը շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



- Բնական պաշարների և բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարում և պահպանում
- Անտառների կառավարում
- Բնագիտական նմուշների պահպանություն և ցուցադրություն
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում և մոնիթորինգ

Շրջակա միջավայրի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիտորինգի ծրագրին կուղղվի 1,168.1 մլն դրամ՝ 2019-ի 1,172.6 մլն դրամի դիմաց:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների բնագավառում քաղաքականությունը նպատակաուղղված է բնական և մարդածին աղետների ռիսկի նվազեցմանը, հնարավոր հետևանքների կանխարգելմանը և վերացմանը:

2020 թվականին արտակարգ իրավիճակների բնագավառում նախատեսվում է՝

- *Համակարգի տարբեր օղակների կատարելագործում և զարգացում,*
- *Սեյսմիկ պաշտպանության ազգային դիտացանցի արդիականացում և թվայնացում,*
- *Հիդրոօդերևութաբանական ստորաբաժանումների, կայանների և դիտակետերի աշխատանքների ավտոմատացում և թվայնացում,*
- *Ռադիոլոկացիոն ցանցի արդիականացում, հակակարկտային հրթիռային համակարգի ներդրում և այլն:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Բնակլիմայական և հիդրոօդերևութաբանական վտանգավոր և անբարենպաստ երևույթների կանխատեսման և վաղ ազդարարման արդյունավետությունը **կաճի** 80-ից մինչև 90%:*



- ***Կաճի** տեխնածին վթարների և արտադրական պատահարների նվազման տեմպը՝ 50-ից **60%**:*



- *Արտակարգ իրավիճակների արձագանքման կարողություններին տիրապետող, տեղեկացված և գիտակ բնակչության թվաքանակի **աճը** կկազմի 10%, նախորդ տարվա 5%-ի դեպքում:*



- *Կգնահատվի օբյեկտների 10%-ի սեյսմակայունության մակարդակը, նախորդ տարվա 5% ցուցանիշի պայմաններում:*
- *Արտակարգ դեպքերի և պատահարների ընդհանուր ահազանգերին արձագանքման մակարդակը 89%-ից **կաճի** մինչև 92%:*



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փրկարար ծառայությունների կողմից ահազանգերին արձագանքման տևողությունը կկրճատվի: Նախատեսվում է, որ ահազանգերին արձագանքման տևողությունը կկրճատվի՝ ահազանգի ստացման պահից մինչև կանչի վայրն ընկած միջին ժամանակահատվածը 26.2 րոպեից կկրճատվի մինչև 24 րոպե Փրկարարական ծառայություններին կուղղվի մոտ 27 տոկոսով ավել միջոցներ, պայմանավորված փրկարարների աշխատավարձի բարձրացմամբ և կկազմի 11,370.6 մլրդ դրամ:

Մարտունակության բարձրացման ապահովում: Կաճի մարտունակության բարձրացման նպատակով իրականացվող ուսումնավարժանքների քանակը և կկազմի 328՝ 9-ով ավել նախորդ տարվա վարժանքների քանակից:

Կաճի ՀՀ մասնակցությունը երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելմանը: Կաճի ՌԴ և երրորդ երկրների տարածքում արտակարգ իրավիճակների կանխարգելման աշխատանքների մասնակցությունը և արտակարգ իրավիճակներից տուժած բնակչությանը մարդասիրական օգնության ցուցաբերումը: 2020-ին պլանավորվում է 6 դեպքերի մասնակցություն՝ նախորդ տարվա 4 դեպքի դիմաց: Բյուջետային հատկացումները կկազմեն 7.7 մլն դրամ:



Արտակարգ իրավիճակների կառավարմանը 2020թ. կուղղվի 15.2 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը կգերազանցի 21.1 տոկոսով, կամ 2.7 մլրդ դրամով: Աճի ավելի քան 90 տոկոսը կուղղվի Փրկարարական ծառայություններ ծրագրին: Փրկարարական ծառայություններ ծրագրին բաժին է ընկնում արտակարգ իրավիճակների ծրագրերի ֆինանսավորման 74.7 տոկոսը: Այս ցուցանիշը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 3.1 տոկոսային կետով:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից իրականացվող ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



2. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԺԾԾ ժամանակահատվածում ՀՀ ոստիկանության առաջնահերթ հիմնախնդիրներն են.

- *Հանցավորության մակարդակի նվազումը, կատարված հանցագործությունների բացահայտման մակարդակի բարձրացումը,*
- *Ոստիկանության վստահելիության մակարդակի բարձրացումը, համակարգում կոռուպցիայի բացառումը,*
- *ՀՀ ռազմավարական նշանակության օբյեկտների և ենթակառուցվածքների անվտանգության ապահովումը,*
- *Ներպետական և անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ արդյունավետ պայքարը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ



- *Հանցագործությունների բացահայտման աճը կկազմի **10%**՝ նախորդ տարվա 5%-ի դիմաց:*
- *Առավել լատենտային հանցագործությունների (կոռուպցիոն բնույթի հանցագործություններ, թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառության և մարդու թրաֆիկինգի կամ շահագործման դեպքեր) հայտնաբերման աճը կկազմի **11%**՝ նախորդ տարվա 7%-ի դիմաց:*
- *Ոստիկանության նկատմամբ հասարակական վստահության մակարդակը նախորդ տարվա համեմատությամբ **կաճի 60%**-ով:*
- *Ծանր հետևանքներով ճանապարհատրանսպորտային պատահարների (3 և ավելի զոհ և/կամ 10 և ավելի վիրավոր) քանակը նախորդ տարվա նկատմամբ **կնվազի** 12%-ով:*



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող ծրագրերին 2020թ. կուղղվի 65.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը կգերազանցի 1.4 տոկոսով, կամ 905 մլն դրամով: Ոստիկանության ծրագրերի բյուջեի 54.9 տոկոսը բաժին է ընկնում «Հասարակական անվտանգության ապահովում» ծրագրին, հաջորդում է «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովում» ծրագիրը՝ 22.3 տոկոս կշռով:

Ոստիկանական կրթական ծառայություններին ուղղվող ֆինանսավորումը կաճի 6.1 տոկոսով և կկազմի 1,6 մլրդ դրամ: Ոստիկանության բարձրագույն մասնագիտական բակալավրական կրթություն կստանան 212, իսկ մագիստրական՝ 20 ուսանողներ: Բարձրագույն ոստիկանական կրթության ծառայությունների ստացմանը կուղղվի 920.7 մլն դրամ: Միջին և նախնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցում ստացող ՀՀ ոստիկանության ծառայողների թիվը համապատասխանաբար կազմում է 119 և 60, որոնց կրթությանը կուղղվի 387.5 և 257.8 մլն դրամ:

Հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման՝ հանցագործությունների և այլ իրավախախտումների կանխման, խափանման, հայտնաբերման և բացահայտման ծառայություններին կուղղվի 24.6 մլրդ դրամ: Պետական պահպանության ծառայություններին կուղղվի 4 մլրդ դրամ:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը ՀՀ ոստիկանության կողմից իրականացվող ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



3. ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ազգային անվտանգության ծառայության գործունեությունը նպատակաուղղված է՝

- *Ներքին և արտաքին սպառնալիքներից անձի, հասարակության ու պետության անվտանգության ապահովման բարձրացմանը,*
- *Տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների ժամանակին հայտնաբերման ու բացահայտման աշխատանքներին,*
- *Օպերատիվ գործունեության արդյունավետության բարձրացմանը,*

- *Պետական սահմանի շուրջօրյա հսկման և պահպանման բարելավմանը, հետախուզության, հակահետախուզության ոլորտի ընդլայնմանը,*
- *Գաղտնի տեղեկատվության անվտանգություն մակարդակի բարելավմանը,*
- *Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց և օբյեկտների անվտանգության ապահովման բարձրացմանը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Օտարերկրյա պետությունների հատուկ ծառայությունների և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին անձանց հետախուզական գործունեության բացահայտման, կանխման և խափանման մակարդակը կկազմի 100%՝ առկա 95% մակարդակի դիմաց:*



- *Կապահովվի ՀՀ պետական սահմանի անձեռնմխելիության* ***100% մակարդակ****:*
- *Օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ հանցագործությունների բացահայտման, կանխման և խափանման մակարդակը կկազմի 100%՝ առկա 75% մակարդակի դիմաց:*



- *Կապահովվի մշտապես պահպանվող օբյեկտների անվտանգության* ***100% մակարդակ****:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվող ծրագրերին կուղղվի 7.2 տոկոսով ավելի միջոցներ, քան 2019թ. և կկազմի 35.1 մլրդ դրամ: Մասնավորապես ազգային անվտանգության ապահովմանը կուղղվի 31.3 մլրդ դրամ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 5.3 տոկոսով:

Հետախուզական, հակահետախուզական, ռազմական հետախուզության, հանցագործությունների դեմ պայքարի և պետական սահմանի պահպանության գործունեության կազմակերպմանը կհատկացվի 23.3 մլրդ դրամ:

Ազգային անվտանգության կարիքների համար անհրաժեշտ **հակավիրուսային ծրագրերի լիցենզիաների ձեռքբերմանը** 2020թ. պետական բյուջեով նախատեսվել է 13.4 մլն դրամ՝ որը 2019 թվականի նկատմամբ աճել է 5.9 մլն դրամով: Ազգային անվտանգության համակարգի **տրանսպորտային սարքավորումների հագեցվածության բարելավմանը** կուղղվի 153.2 մլն դրամ:

Պետական պահպանության ապահովմանը կուղղվի 3.9 մլրդ դրամ՝ նախորդ տարվա մակարդակը գերազանցում է 24.5 տոկոսով: Պետական պահպանության ծառայություններ ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել բարձրաստիճան պաշտոնատար անձանց և ՀՀ-ում գտնվող բարձրաստիճան հյուրերի անվտանգության ապահովում: Մշտական պահպանության ենթակա անձանց թիվը 10 է:

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը ՀՀ ազգային անվտանգության ծառայության կողմից իրականացվող ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Քաղաքականության հիմնական թիրախներն են՝

- *Դատաիրավական բարեփոխումների իրականացումը,*
- *Մարդու իրավունքների պաշտպանվածության և մարդու ազատ ստեղծագործելու, արժանապատիվ ու երջանիկ ապրելու համար նպաստավոր պայմանների ստեղծումը,*
- *Կոռուպցիայի դեմ շարունակական պայքարը:*

Կառավարությունը ՄԺԾԾ ժամանակահատվածում կարևորում է և միջոցառումներ են նախատեսված քրեաիրավական արդարադատության, անչափահասների արդարադատության և էլեկտրոնային արդարադատության ոլորտներում:

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *Կապահովվի բոլոր իրավաբանական անձանց պետական գրանցման և հաշվառման տվյալների հրապարակայնացում:*
- *Կընդլայնվի կալանավորվածների և դատապարտյալների անձնական և մշակութային, կրթական ու հոգևոր զարգացման պատշաճ պայմանների ապահովման, սոցիալական, հոգեբանական և իրավական աշխատանքների ընդգրկման մակարդակը և կկազմի 78.5%՝ նախորդ տարվա 75%-ի դիմաց:*



- *Կընդլայվի կալանավորվածների և դատապարտյալների զբաղվածության մակարդակը և կկազմի 22%՝ նախորդ տարվա 20%-ի դիմաց:*



- *Դատական համակարգի անկախությունը իշխանության այլ ճյուղերի, անհատների կամ ընկերությունների ազդեցությունից (WEF-ի ցուցանիշի) առկա 3.3 մակարդակից կաճի և 2022թ կկազմի 6.3:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոլորտին ուղղվող ռեսուրսները կաճեն 1.1 մլրդ դրամով կամ 2.4 տոկոսով: Բյուջետային ծախսերի ամենամեծ աճը կարձանագրվի Մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում՝ 13.9 տոկոս: Հետևում է արդարադատության բնագավառի ծրագրերի աճը՝ 4.2 տոկոս: 2.3 և 1.9 տոկոսով կաճեն համապատասխանաբար դատական իշխանության գործունեության ապահովման (Բարձրագույն դատական խորհուրդ) և Դատախազության ծրագրերի ֆինանսավորման ծավալները:



Կբարելավվեն կալանավայրերում դատապարտյալներին մատուցվող տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման ծառայությունները: Այս նպատակով Արդարադատության նախարարության կազմում ստեղծվել է «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ը: 2020 թվականի պետական բյուջեի նախագծով արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալներին պատշաճ բժշկական օգնության և սպասարկման ծառայություններին նախատեսվել է ուղղել 706.3 մլն դրամ:

Դատապարտյալների և կալանքի տակ գտնվող անձանց թիվը գնահատվում է, որ կկազմի 3,000 մարդ: Քրեակատարողական ծառայությունների արժեքը մեկ դատապարտյալի հաշվով կազմում է ամսական միջինում 259.2 հազար դրամ, որը նախորդ տարվա մակարդակը զիջում է 5,400 դրամով: Քրեակատարողական ծառայություններին ուղղվող ֆինանսական միջոցները կաճեն 6 տոկոսով:

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը ՀՀ արդարադատության նախարարության կողմից իրականացվող ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



Քրեակատարողական ծառայություններ

Հարկադիր կատարման ծառայություններ

Արդարադատության ոլորտում քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում խորհրդատվության և մոնիտորինգի իրականացում

Դատական և հանրային պաշտպանություն

Իրավական իրազեկում և տեղեկատվության ապահովում

Արդարադատության համակարգի աշխատակիցների վերապատրաստում և հատուկ ուսուցում

Քաղաքացիական կացության ակտերի գրանցում

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կառավարության արտաքին քաղաքականությունն ուղղված է՝

- *հանրապետության արտաքին անվտանգության բաղադրիչի ամրապնդմանը,*
- *երկրի զարգացման համար արտաքին բարենպաստ պայմանների և երաշխիքների ապահովմանը,*
- *բարեկամ և գործընկեր պետությունների հետ փոխշահավետ համագործակցության զարգացմանը,*
- *միջազգային կազմակերպություններում և ինտեգրացիոն գործընթացներում ներգրավվածության խորացմանը:*

Հայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի կարևորագույն գերխնդիրներ եղել և մնում են՝

- *Ղարաբաղյան հիմնախնդրի բացառապես խաղաղ կարգավորման ուղղությամբ գործելը,*

- *Ցեղասպանությունների և մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման գործընթացի շարունակականության ապահովումը:*

ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- *ՀՀ միջազգային երկկողմ հարաբերությունները կընդլայնվեն. ՀՀ-ի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատած օտարերկրյա պետությունների և միջազգային իրավունքի այլ սուբյեկտների քանակը 2020թ. 176-ից **կաճի** 178-ի:*

- *ՀՀ միջազգային բազմակողմ հարաբերությունները կընդլայնվեն. միջազգային կազմակերպությունների քանակը, որոնց ՀՀ-ը անդամակցում կամ փոխգործակցում է 2020թ. 97-ից **կաճի** 114-ի:*

- *Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների քանակը 2020թ. 58-ից **կաճի** 63-ի:*

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ դեսպանությունների և ներկայացուցչությունների պահպանման ծախսերը 2020 թվականի համար ծրագրավորվել են 10.8 մլրդ դրամի չափով:

Ծախսերն ավելացվել են **Էրբիլում** ՀՀ հյուպատոսության, **Կատարում, Եթովպիայում, Իսրաելում** ՀՀ դեսպանության ստեղծման, **Ուզբեկստանում** ՀՀ դեսպանի նշանակման (նստավայրը Երևան՝) հետ կապված պահպանման ծախսերի նախատեսմամբ, ինչպես նաև **Վատիկանում, Ժնևում և Լոնդոնում** ՀՀ դիվանագիտական, **Լիոնում և Լոս Անջելեսում** ՀՀ գլխավոր հյուպատոսական ներկայացուցչությունների գործունեության ապահովման նպատակով ծախսերի նախատեսմամբ, որի համար նախորդ տարիներին ծախս չի նախատեսվել:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

2020թ., մլրդ դրամ
(փակագծերում՝ կշիռն ընդամենը արտաքին քաղաքականության ծրագրերի բյուջեում)



Աճը 2019թ. համեմատ, %



Օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինների գործունեության կազմակերպում և իրականացում

Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ

Արտաքին գործերի ոլորտում կառավարության քաղաքականության մշակում և իրականացում

Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արարողակարգային միջոցառումների իրականացում

Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ոլորտում մասնագետների պատրաստում և վերապատրաստում

ՍՓՅՈՒՌՔ

Կառավարությունը սփյուռքի բնագավառում կարևորում է՝

- *Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացումը և ամրապնդումը, Հայկական Սփյուռքի հայապահպանությանն ուղղված խնդիրների լուծումը, ինչպես նաև Սփյուռքում հայկական հարցի միջազգայնացումը:*

- *ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավումը, Սփյուռքի մասնակցությունը Հայաստանի տնտեսական կյանքին:*

- *Հայաստանի և Սփյուռքի միջև կրթական՝ մշակութային և երիտասարդական հաղորդակցության՝ ճանաչողության և տեղեկացվածության մակարդակի բարձրացումը:*



ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ (2022թ.)

- *Աշխարհի բոլոր հայ համայնքներին հասանելի կդառնան հայկական մշակույթը, արվեստը, պատմությունը, ազգային արժեքներն ու ֆիլմերը. 2020թ. սփյուռքահայերի իրազեկվածության մակարդակը կհասնի 38%-ի:*



- *Կիրականացվի Սփյուռքի ներուժի ամբողջական քարտեզագրում. 2020թ. կուսումնասիրվեն սփյուռքի համայնքների 50%-ը:*



ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստան-Սփյուռք գործակցության զարգացմանը և ամրապնդմանը կուղղվի 450.1 մլն դրամ: Ծրագրի շրջանակներում սփյուռքահայերին, մասնավորապես երիտասարդությանը, կներկայացվի Հայաստանը, կկազմակերպվեն հայրենաճանաչության այցելություններ, սփյուռքահայ երիտասարդ մասնագետները կներգրավվեն Հայաստանի հանրային քաղաքականության ոլորտում՝ նրանց գիտելիքներն ու փորձը կիրառելու համար:

Կուսումնասիրվեն Սփյուռքի 80 համայնքների խնդիրները: Միջոցներ կձեռնարկվեն դրանց լուծման ուղղությամբ, ըստ մասնագիտական ոլորտների կկազմակերպվեն հավաք-հանդիպումներ: Այս նպատակին կուղղվի 125.0 մլն դրամ:

«Քայլ դեպի տուն» միջոցառման շրջանակներում սփյուռքահայ 600 երիտասարդների համար կկազմակերպվեն ճանաչողական այցելություններ Հայաստան: Նպատակն է նպաստել սփյուռքի հայ պատանիների ազգային ինքնության պահպանմանը և զարգացմանը, հայրենաճանաչության մակարդակի բարձրացմանը: Այս միջոցառմանը կուղղվի 139.3 մլն դրամ:

Սփյուռքահայ 40 երիտասարդ առաջնորդների համար կկազմակերպվեն համայնքային գործիչների վերապատրաստման դասընթացներ: Արդյունքում նրանք իրազեկ կդառնան Հայաստանի ներքին քաղաքականությանը: Այս ուղղությամբ կծախսվի 25.0 մլն դրամ:

ՀՀ հանրային ոլորտում կկազմակերպվի 20 երիտասարդ սփյուռքահայ երիտասարդ մասնագետների պրակտիկան: Նրանք հնարավորություն կունենան ծանոթանալու ՀՀ սոցիալ-քաղաքական կյանքին, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքներին և իրենց փորձն ու գիտելիքները կիրառել ՀՀ պետական քաղաքականության տարբեր ուղղություններում: Միջոցառմանը կուղղվի 90.2 մլն դրամ:

ՀՀ զարգացման գործընթացներում Սփյուռքի ներուժի ներգրավմանն ուղղված միջոցառումներին կուղղվի 325.1 մլն դրամ: Նպատակը Սփյուռքի ներուժի ներգրավումն է Հայաստանի զարգացման գործընթացին, համատեղ ծրագրերի իրականացումը, համահայկական մասնագիտական ցանցերի ստեղծումը:

Ռեսուրսները կուղղվեն սփյուռքի համայնքների ուսումնասիրությունների և տվյալների հավաքագրման աշխատանքների կազմակերպմանը: Կստեղծվի 80 երկրի մոտ 70,000 անհատի տվյալների բազա, կուսումնասիրվեն 25,000 համայնքներ, կձևավորվի սփյուռքի քարտեզը:

Կկազմակերպվեն 3 համահայկական համաժողովներ: Համաժողովները կկազմակերպվեն ի նպաստ Հայաստանի և Սփյուռքի միջև համագործակցության հաստատմանը, համահայկական ցանցերի ստեղծմանը, և հայրենադարձությանը: Գնահատվում է, որ 100 մասնագետներ տարվա ընթացքում կհայրենադարձվեն Հայաստան:

ՍՓՅՈՒՌՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

2019թ. և 2020թ., մլն դրամ (փակագծերում՝ կշիռն ընդամենը սփյուռքի բնագավառի ծրագրերի բյուջեում)





- Սփյուռքի ծրագրերն իրականացվում են Վարչապետի աշխատակազմում գործող Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի միջոցով: Սփյուռքի ծրագրերի գծով ՀՀ 2020 թվականին նախատեսվում է հատկացնել 775.2 մլն դրամ՝ ՀՀ 2019 թվականի պետական բյուջեով հաստատված 710.5 մլն դրամի դիմաց: Ծախսերն աճել են 64.7 մլն դրամով, կամ 9.1 տոկոսով:
- Ի լրումն Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակի կողմից իրականացվող ծրագրերի՝ կրթության, մշակույթի և սպորտի ոլորտներում ևս իրականացվում են սփյուռքի հետ համագործակցության միջոցառումներ, որոնց ՀՀ ԿԳՄՄՆ կողմից կուղղվի 466.2 մլն դրամ:

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Պետական ֆինանսների կառավարման ոլորտում ՀՀ կառավարության ստանձնած հանձնառություններ են.

Պետական ֆինանսների նպատակային, խնայողաբար և արդյունավետ օգտագործում, պետական ծրագրերի ծախսարդյունավետ կառավարում:

Ստվերային տնտեսության կրճատմանն ու մրցունակ բիզնես միջավայրի ձևավորմանն ուղղված հարկային քաղաքականության բարելավում և հարկային վարչարարության արդիականացում:

Ֆինանսական կարգապահության բարելավում: Պետական ծրագրերի արդյունքային ցուցանիշների գնահատման մեխանիզմների ներդրում:

Պետական կառավարման համակարգի օպտիմալացում:

Մարդկային կապիտալին և ենթակառուցվածքներին ուղղվող ծախսերի տեսակարար կշռի մեծացում:

Հանրային ներդրումների կառավարման համակարգի ներդրում:

Պետական գնումների արդար և թափանցիկ համակարգի ներդրում:

ՊՖԿ միասնական էլեկտրոնային համակարգի ներդրում:

Կոռուպցիոն երևույթները ծնող պատճառների վերահսկման և վերջիններիս վերացմանը կամ չեզոքացմանն ուղղված գործողությունների իրականացում:



ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

- ՀՀ կառավարության ֆիքսված տոկոսադրույքով պարտքի նվազագույն կշիռն ընդամենը պարտքի մեջ 85%-ից **կնվազի** և 2022թ. կկազմի 80%:



- ՀՀ կառավարության ներքին պետական պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կգերազանցի նվազագույն ուղենիշային 20%-ը՝ կազմելով **25.6%** (2020թ.):

- ՀՀ կառավարության ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ կգերազանցի նվազագույն ուղենիշային 20%-ը՝ կազմելով **24.1%** (2020թ.):

- Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալում 12.9%-ից **կաճի** և 2022թ. կկազմի 20%:

- ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2022թ. կկազմի 8-11 տարի:

- Հարկաբյուջետային ազդակը **կաճի** -2.3-ից մինչև 1.6 (2020թ.):



- Երկարաժամկետ սուվերեն վարկունակության միջազգային վարկանիշերը կբարելավվեն.՝

2025թ.

Fitch վարկանիշը՝ «B+դրական հեռանկարով» → «BB- կայուն հեռանկարով»

Moody's վարկանիշը՝ «B1 դրական հեռանկարով» → «Ba- կայուն հեռանկարով»

- Հարկային եկամուտների կշիռը ոչ գյուղատնտեսական ՀՆԱ-ում 24.2%-ից **կաճի** մինչև 27.6% (2025թ.)



- Հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 20.9%-ից **կաճի** մինչև 24% (2025թ.)



- Հարկային վարչարարության արդյունավետության գործակիցը 1.39-ից **կնվազի** մինչև **1.12** (2025թ.)

- Աուդիտի բարձրագույն մարմինների միջազգային կազմակերպության (INTOSAI) մեթոդաբանության հիման վրա (SAI PMF) ՀՀ հաշվեքննիչ պալատի գործունեության տարեկան գնահատականը **կաճի**՝ (1;2) միջակայքից **(2;3)**:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կաճեն պետական պարտքի կառավարման ծախսերը: Մասնավորապես Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը, այսինքն՝ տոկոսավճարների վճարման հետ կապված ծախսերին ուղղվող միջոցները կաճեն 10.1 մլրդ դրամով և կկազմեն 168.2 մլրդ դրամ:

Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստումներին ուղղվող ծախսերը կկազմեն 32.1 մլն դրամ: 2020թ. ընթացքում մասնագիտական վերապատրաստումներ կանցնեն թվով 280 ներքին աուդիտորներ, 661 գնումների համակարգողներ, ծրագրային բյուջետավորման վերապատրաստում կանցնեն 320 ծրագրային և ֆինանսական մասնագետներ:

Հարկային և մաքսային ծառայողների վերապատրաստումներին կուղղվի 150.4 մլն դրամ: Կիրականացվեն 41 անուն դասընթացներ, կվերապատրաստվեն 2,240 հարկային և մասքսային մասնագետներ:



Պետական հատվածի արդիականացման ծրագրին ուղղվող ռեսուրսները կաճեն 2.5 մլրդ դրամով և կկազմեն 6.7 մլրդ դրամ: Ռեսուրսները կուղղվեն ՀՀ **հանրային հատվածի ֆինանսական կառավարման բարեփոխումների մշակմանը և իրականացմանը** (ՀԲ Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիր՝ 4.8 մլրդ դրամ) և **Կառավարության ֆինանսական կառավարման տեղեկատվական համակարգերի (ԿՖԿՏՀ) ներդրմանը** (ՌԴ կողմից ՀՀ անհատույց ֆինանսական օգնության դրամաշնորհային ծրագիր՝ 1.9 մլրդ դրամ):

ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

Ծրագիր	2020թ. / 2019թ. մլն դրամ	2020թ./2019թ.	Պատասխանատու պետական մարմին
Պետական պարտքի կառավարում	168,184.6 / 158,125.3	6.4% ↑	ՀՀ ֆինանսների նախարարություն
Հանրային ֆինանսների կառավարման բնագավառում պետական քաղաքականության մշակում՝ ծրագրերի համակարգում և մոնիտորինգ	2,840.5 / 2,901.5	-2.1% ↓	
Գնումների գործընթացի կարգավորում և համակարգում	118.0 / 153.1	-23.0% ↓	
Հանրային հատվածի ֆինանսական ոլորտի մասնագետների վերապատրաստում	32.1 / 59.4	-45.9% ↓	
Հարկային և մաքսային ծառայություններ	28,706.1 / 22,017.8	30.4% ↑	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Պետական հատվածի արդիականացման ծրագիր	6,673.6 / 4,174.5	59.9% ↑	Վարչապետի աշխատակազմ
Հանրային ֆինանսների և սեփականության ոլորտում հաշվեքննություն	1,163.9 / 1,119.1	4.0% ↑	ՀՀ հաշվեքննիչ պալատ

ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ (Այլ)

Հանրային կառավարման համակարգի բարեփոխումները միտված են՝

Պետական գերատեսչությունների ծախսարդյունավետության և աշխատանքի արդյունավետության բարձրացմանը,

Պետական կառավարման համակարգում կոռուպցիոն երևույթների բացառմանը,

Պետական մարմինների գործունեության թափանցիկության, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության բարձրացմանը:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կոռուպցիայի կանխարգելման համակարգի զարգացմանը կուղղվի 229.7 մլն դրամ, որը նախորդ տարվա համեմատությամբ կնվազի 24.3 մլն դրամով: Ծրագրի շրջանակներում կմշակվի և կհաստատվի Հանրային ծառայողների վարքագծի տիպային կանոնագիրք, պաշտոնատար անձանց կտրամադրվեն էթիկային, շահերի բախմանը և հայտարարագրմանն առնչվող հարցերով մասնագիտական խորհրդատվություն:

Հակակոռուպցիոն կրթական ծրագրերի իրականացման նպատակով կմշակվեն մեթոդական ուղեցույցներ, հակակոռուպցիոն քարոզչական նյութեր, հանրության համար 4 սոցիալական հոլովակներ: Կկազմակերպվեն հակակոռուպցիոն ուղղվածությամբ կրթական և վերապատրաստման դասընթացներ, որոնց կմասնակցեն 400 պաշտոնատար անձ: Ի լրումն հակակոռուպցիոն ոլորտում իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումներ կկազմակերպվեն նաև ՔՀԿ-ների ներկայացուցիչների մասնակցությամբ:

Կվերապատրաստվեն 9,500 քաղաքացիական ծառայողներ՝ նախորդ տարվա 700-ի դիմաց: Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման և ուսուցման ծառայություններին կուղղվի 25.2 մլն դրամ: 2020թ. քաղաքացիական ծառայողների մեջ **հետբուհական կրթություն ունեցողների կշիռը 5.8 տոկոսից կաճի մինչև 7.5 տոկոս, իսկ արտերկրում բարձրագույն կրթություն ստացած քաղաքացիական ծառայողների կշիռը ընդամենը քաղաքացիական ծառայողների թվում 1.8 տոկոսից կաճի մինչև 3 տոկոս:**

Կնվազի քաղաքական կուսակցություններին՝ հասարակական կազմակերպություններին և արհմիություններին կաջակցությունը: Նախորդ տարվա 310.4 մլն դրամի փոխարեն կուղղվի 135.7 մլն դրամ: Մասնավորապես **Հանրային խորհրդի** բնականոն գործունեության ապահովմանը **կուղղվի 12 մլն դրամ:** Պետական աջակցություն **ազգային փոքրամասնությունների** հասարակական կազմակերպություններին **կուղղվի 20 մլն դրամ,** որի շրջանակներում աջակցություն կստանան 11 ՀԿ:

ՀՀ ԱԺ-ում ներկայացված թվով 5 քաղաքական կուսակցություններին կամ կուսակցությունների դաշինքներին նախատեսված օժանդակությանը և փոխհատուցումներին կուղղվի 103 7 մլն դրամ:

2020 թվականի պետական բյուջեում միջոցներ են նախատեսվել ընթացիկ տարվա տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների համար՝ 734.3 մլն դրամի չափով:

2020 թվականին մարդահամարի անցկացման աշխատանքների համար նախատեսվել է շուրջ 1,341.2 մլն դրամ:

Տեսչական վերահսկողությունների իրականամանը կուղղվի 4,945 մլն դրամ, նախորդ տարվա համեմատությամբ 3.4 տոկոսով կամ 160.4 մլն դրամով ավել:

Տեսչական վերահսկողության ծրագրերը

	2020թ.	2019թ.	2020թ./2019թ. մլն դրամ	2020թ./2019թ., %
Առողջապահության ոլորտում վերահսկողության ծառայություններ	1,122.1	1,045.6	76.51	7.3
Բնապահպանության ոլորտում վերահսկողության ծառայություններ	923.8	906.1	17.69	2.0
Կրթության ոլորտում վերահսկողության ծառայություններ	232.0	221.8	10.16	4.6
Շուկայի վերահսկողության ծառայություններ	230.3	180.6	49.70	27.5
Արտադրանքի և որակի վերահսկողության ծառայություններ	15.0	15.0	0.0	0.0
Քաղաքաշինության և ճարտարապետության բնագավառում վերահսկողության ծառայություններ	976.2	1,025.4	-49.21	-4.8
Սննդամթերքի անվտանգության բնագավառում վերահսկողության իրականացման ծառայություններ	1,445.7	1,390.2	55.52	4.0
Ընդամենը	4,945.0	4,784.7	160.36	3.4

ՀՀ 2020 թվականի պետական մարմինների պահպանման ծախսերի հիմքում 19,709 հաստիքային միավորների քանակն է, որը 2019 թվականի համեմատ ավելացել է 517 միավորով:

Հանրային իշխանության մարմինների աշխատողների աշխատավարձի ֆոնդը 2020 թվականի համար ծրագրավորվել է 87 4 մլրդ դրամի չափով, որը 2019 թվականի ծրագրավորվածից ավելի է 6 1 մլրդ դրամով: Այդ թվում, բոլոր մարմինների համար նախատեսվել է պարգևատրման ֆոնդ, որը կազմում է 22 0 մլրդ դրամ:

Գործուղումների և ծառայողական ուղևորությունների ծախսերը ծրագրավորվել են 3,562.0 մլն դրամի չափով՝ պահպանվել է նախորդ տարվա մակարդակը:

Տրանսպորտային միջոցների պահպանման ծախսերը ծրագրավորվել են 1 2 մլրդ դրամի չափով, որը 2019 թվականի ծրագրավորվածից պակաս է 0.7 մլրդ դրամով: Ծառայողական ավտոմեքենաների պահպանման ծախսերը ծրագրավորվել է ծառայողական ավտոմեքենաների քանակին (927 միավոր) համապատասխան, արդյունքում այն նախորդ տարվանից պակասել է 155 միավորով: Ընդ որում՝ 1 մեքենայի պահպանման տարեկան ծախսը հաշվարկվել է 1 2 մլն դրամի չափով (պահպանվել է նախորդ տարիների մակարդակը):

Ներդիր 2. ԲՅՈՒՋԵԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Հանրային մասնակցության պատուհան
ՄԺԾԾ – Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՊԲ – Պետական բյուջե

Մասնակցային բյուջետավորում - բյուջետային գործընթացի շրջանակներում նախատեսված հանրային իրազեկման և հանրության հետ համագործակցության մեխանիզմների և գործընթացների ամբողջությունը, որոնք նպատակ ունեն քաղաքացիական հասարակության ներգրավման միջոցով աջակցել բյուջետային որոշումների կայացմանը: Մասնակցային գործընթացները պետք է բարձրացնեն պետական մարմինների հաշվետվողականությունը քաղաքացիների առջև՝ ձևավորելով փոխադարձ վստահության մթնոլորտ:

ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Հարկաբյուջետային քաղաքականություն (Fiscal policy) *- պետության կողմից իրականացվող հիմնական մակրոտնտեսական քաղաքականություններից մեկն է, որը հարկերի և պետական ծախսերի միջոցով ուղղված է ամբողջական առաջարկի և պահանջարկի կարգավորմանը՝ նպատակ ունենալով զբաղվածության մակարդակի փոփոխությունը, տնտեսական աճի փոփոխությունը կամ տնտեսական կայունությունը: Հարկաբյուջետային քաղաքականությունը Հայաստանում հիմնականում մշակվում է կառավարության և Ազգային ժողովի կողմից, իրականացվում է կառավարության կողմից:*

Պետական բյուջե (State Budget) *- կառավարության լիազորությունների և պետական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման ֆինանսական ծրագիրն է: Այն կառավարության ֆինանսական միջոցների ամբողջական հաշվետվությունն է, որը ներառում է պետական ծախսերը, հարկային և ոչ հարկային եկամուտները, դեֆիցիտը կամ հավելուրդը: Որպես տնտեսական քաղաքականության և, մասնավորապես, հարկաբյուջետային քաղաքականության կարևոր փաստաթուղթ, բյուջեն ցույց է տալիս տնտեսության վրա պետության ազդեցության բնույթը և չափը: Այսինքն, բյուջեն ցույց է տալիս, թե հասարակական ռեսուրսներն օգտագործելով կառավարությունը ինչպես է ծրագրում իրականացնել քաղաքական նպատակները և ինչպիսի հասարակական ծառայություններ է մատուցում: Բյուջեն կազմվում և մշակվում է գործադիր իշխանության կողմից և ներկայացվում է օրենսդիր մարմին (Ազգային ժողով) ճշգրտման և հաստատման: Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեն օրենքի ուժ ունեցող փաստաթուղթ է:*

Ծախսային բյուջե (Expenditure Budgeting) *- ըստ ծախսատեսակների դասակարգված ֆինանսական փաստաթուղթ է, որը սահմանում է, թե ինչ գումարներ կծախսվեն կամ ծախսվել են յուրաքանչյուր ծախսային հոդվածի գծով: Ծախսային բյուջեն համարվում է բյուջեի պարզագույն տեսակ: Պատասխանում է հետևյալ հարցերին՝ ինչ է գնվել, ինչքա՞ն է ծախսվել և ինչի՞ համար:*

Ծրագրային բյուջե (Program Budgeting) *- Նպատակն է բարելավել հանրային ծախսերի առաջնահերթությունների սահմանումը և բարձրացնել հանրային ֆինանսների կառավարման արդյունքայնությունը, արդյունավետությունը և թափանցիկությունը: Այն ցույց է տալիս, թե ինչ արդյունքներ ձեռք կբերվեն բյուջետային ծրագրերն իրականացնելիս և ինչ ռեսուրսներ են անհրաժեշտ ռազմավարական ծրագրերի արդյունքների ձեռքբերման համար: Պատասխանում է հետևյալ հարցերին՝*
Պատասխանում է հետևյալ հարցերին՝

- *Ինչ արդյունքներ ձեռք կբերվեն,*
- *Ինչ ազդեցություն կլինի հասարակության վրա,*
- *Ինչ ազդեցություն կլինի շահառուների վրա,*
- *Որքա՞ն գումար կծախսվի տվյալ ծառայությունը մատուցելու և տվյալ նպատակին հասնելու համար:*

Մասնակցային բյուջետավորում (Participatory Budgeting) *– Գործընթաց է, որի միջոցով չընտրված բնակչությունը (քաղաքացիները) անմիջականորեն քննարկում, բանակցում և որոշում են առկա հանրային ռեսուրսների կամ դրանց մի մասի ծախսման ուղղությունները կամ նպաստում են այդ որոշումների կայացմանը:*

Բյուջետային գործընթաց (Budget Process) *- Հանրային հատվածի բյուջեների ձևավորման, բյուջեների կատարման (ներառյալ հաշվետվությունների կազմում, աուդիտ և գնահատում) գործընթացն է:*

Բյուջեի կատարում (Budget execution) *- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կանոնակարգված գործունեությունն է՝ համապատասխան բյուջեների եկամուտների (մուտքերի) ձևավորման և ծախսերի իրականացման ուղղությունների: Պետական բյուջեի կատարման համար պատասխանատու է կառավարությունը:*

Բյուջետային տարի (Fiscal or Budget year) *- 12 ամիս տևողությամբ ժամանակահատված է, որի համար նախատեսվում և հաշվառվում են բյուջեի եկամուտները և ծախսերը: Հայաստանում այն համընկնում է օրացուցային տարվա հետ:*

Բյուջեի ծախսեր (Budget expenditures) *- տվյալ տարվա բյուջեով նախատեսված և օրենսդրությամբ սահմանված կարգով կառավարության և/կամ համայնքների կողմից կատարման ենթակա ծախսերն են:*

Բյուջեի եկամուտներ (Budget revenues) *- այն դրամական միջոցներն են, որոնք որոշակի կարգով, անհատույց և անվերադարձ կերպով հավաքագրվում և վճարվում են պետական կամ համայնքի բյուջե: Բյուջեի եկամուտները բաժանվում են հարկային եկամուտների, տուրքերի, ոչ հարկային*

եկամուտների, կապիտալի գործառնություններից եկամուտների և տրանսֆերտների:

Բյուջեի դեֆիցիտ/պակասուրդ (Budget deficit) *- բյուջեի եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ, ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելին քան բյուջեի եկամուտներն են: Այսինքն, ներքին կամ արտաքին աղբյուրներից ներգրավելով լրացուցիչ միջոցներ ֆինանսավորվում են բյուջեի եկամուտները գերազանցող ծախսերը:*

Բյուջեի հավելուրդ (Budget surplus) *- բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումն է: Այն տեղի է ունենում, երբ ելնելով իրականացվող քաղաքականությունների նպատակներից, որոշվում է ծախսել ավելի քիչ քան բյուջեի եկամուտներն են:*

Դեֆիցիտի ֆինանսավորում (Deficit financing) *- կառավարության պարտքի ավելացման և պարտքի մարման ֆինանսական գործարքներն են, որոնց հանրագումարը համապատասխանում է տվյալ ժամանակահատվածում բյուջեի եկամուտների և ծախսերի տարբերությանը: Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման հիմնական աղբյուրներն են՝ պետական պարտատոմսերի առաջնային տեղաբաշխում և մարում, վարկերի ստացում և մարում, սեփականաշնորհումից ստացված միջոցների օգտագործում և այլն: Դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրները դասակարգվում են ըստ ներքին և արտաքին աղբյուրների: Բյուջեի դեֆիցիտը կարող է ֆինանսավորվել բանկերի, ոչ բանկային ինստիտուտների և ֆիզական անձանց կողմից:*

Բյուջեի ծախսերի դասակարգում (Classification of budget expenditures) *- պետական և համայնքի բյուջեների ծախսերի խմբավորումն է ըստ տեսակների և ուղղությունների, որով ապահովվում է ցուցանիշների համադրելիությունը: Բյուջեի ծախսերը խմբավորվում են ըստ իրենց տնտեսագիտական բովանդակության (տնտեսագիտական դասակարգում), ըստ ուղղությունների (գործառական դասակարգում), ըստ գերատեսչությունների (գերատեսչական դասակարգում) և ըստ ծրագրերի (ծրագրային դասակարգում):*

Գործառական դասակարգում (Functional classification) *- արտացոլում է բյուջեի ծախսերի խմբավորումը ըստ գործունեության ոլորտների հիմնական ուղղությունների: Փաստացի դա պետական (կամ տեղական) կառավարման մարմինների հիմնական գործառույթների իրականացման ֆինանսավորման ուղղություններն արտահայտող բյուջետային ծախսերի խմբավորումն է: Օրինակ՝ ընդհանուր բնույթի պետական ծառայությունների ծախսեր, պաշտպանության, առողջապահության, կրթության և գիտության ոլորտների ծախսեր և այլն:*

Տնտեսագիտական դասակարգում (Economic classification) *- բյուջեի ծախսերի խմբավորումն է ըստ տնտեսական բովանդակության: Ըստ տնտեսագիտական դասակարգման խմբավորվում են՝ ընթացիկ ծախսերը, որը ներառում է աշխատավարձը, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումը, տոկոսավճարները, ընթացիկ տրանսֆերտները և այլն, կապիտալ ծախսերը, զուտ վարկավորումը:*

Գերատեսչական դասակարգում (Administrative cllasification) *- ներկայացնում է պետբյուջեի ծախսերի բաշխումը օրենսդիր,գործադիր և դատական մարմինների հանրապետական ու տարածքային կառավարման մարմինների միջև:*

Բյուջետային ծրագիրը (Budget Program) *- պետության միևնույն կոնկրետ նպատակի իրագործմանն ուղղված պետության միջամտությունների/միջոցառումների տրամաբանական ամբողջություն է:*

Վերջնական արդյունքի չափորոշիչներ (Outcome Indicators) *- Բյուջետային ծրագրի կատարողական չափորոշիչներ են, որոնք հանդիսանում են բյուջետային ծրագրերի նպատակների իրագործման չափման, կատարողականի և արդյունավետության գնահատման հիմնական գործիքը, բնութագրում են հանրային պահանջարկի բավարարման աստիճանը:*

Ուղղակի արդյունքի չափորոշիչներ (Output Indicators) *- Բյուջետային ծրագրի կատարողական չափորոշիչներ են, որոնք բնութագրում է մատուցված ծառայությունների ծավալը կամ որակը:*

Պահուստային ֆոնդ (Reserve fund) *- Բյուջեում նախատեսված ծախսային հոդված է, որի հաշվին ֆինանսավորվում են տվյալ տարվա բյուջեում չնախատեսված, անկանխատեսելի ծախսերը, ինչպես նաև բյուջետային երաշխիքների ապահովման համար անհրաժեշտ ծախսերը:*

Ֆինանսական համահարթեցում (Financial equalization) *- համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելու, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծելու համար տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցում:*

Դոտացիա (Dotation) *- Պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող տրանսֆերտներ են: Դրանք ոչ նպատակային հատկացումներ են, որոնք ուղղվում են համայքի բյուջեի վարչական մասում արտացոլվող ընթացիկ ծախսերի ֆինանսավորմանը:*

Սուբվենցիա (Subvention) *- համայնքի կողմից իրականացվող առանձին նպատակային ծախսատեսակի (ծրագրի) կատարման համար անհատույց և անվերադարձ կարգով տրվող դրամական միջոցներն են:*

Սուբսիդիա (Subsidy) *- այն գումարներն են, որոնք պետական բյուջեից անհատույց և անվերադարձ կերպով հատկացվում են պետական և ոչ պետական ձեռնարկություններին և կազմակերպություններին իրենց ընթացիկ գործունեության*

արդյունքում առաջացած վնասները ծածկելու կամ գործունեությունը խթանելու համար: Սուբսիդաները սկզբունքորեն հատկացվում են տվյալ ապրանքների կամ ծառայության շուկայական գնի (կամ ինքնարժեքի) և փաստացի գնի տարբերությունը ծածկելու համար:

Համախառն ներքին արդյունք (ՀՆԱ) (Gross domestic product, GDP) *- որոշակի ժամանակաշրջանում երկրի տնտեսական տարածքում ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների կողմից արտադրված վերջնական սպառման ապրանքների և ծառայությունների գումարային արժեքն է՝ արտահայտված շուկայական գներով:*

Տնտեսական աճ (Economic growth) *- բնութագրում է տնտեսությունում ապրանքների և ծառայությունների արտադրության ծավալների և/կամ համախառն ավելացված արժեքի (նոր եկամուտների) փոփոխությունը: Տնտեսական աճը սովորաբար չափվում է ՀՆԱ-ի իրական աճով կամ մեկ շնչին ընկնող իրական ՀԱԱ-ի փոփոխությամբ:*

Պետական պարտք (Public debt) *- Դա պետության պարտքային պարտավորությունների հանրագումարն է: Այն գոյանում է դեֆիցիտի ֆինանսավորման նպատակով ռեզիդենտներից կամ ոչ ռեզիդենտներից արժեթղթերի կամ վարկերի միջոցով փոխառությունների ներգրավման արդյունքում:*

Աղբյուրը՝ Բյուջետային և տնտեսագիտական տերմինների և հասկացությունների համառոտ հանրամատչելի բացատրագիր, ՏՀՀԿ, 2003թ.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԶԲ	Ասիական զարգացման բանկ
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱՀ	Արցախի Հանրապետություն
ԱՄՆՄԶԳ	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՈՒՀ	Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳՁՀ	Գերձայնային հետազոտություն
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՆԲ	Եվրոպական ներդրումային բանկ
ԶԼՄ	Զանգվածային լրատվության միջոց
ԸԿԲՆ	Ընտանիքի կենսամակարդակի բարձրացմանն ուղղված նպաստներ
ԿԳՄՍՆ	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀԱԷԿ	Հայկական ատոմային էլեկտրակայան
ՀԲ	Համաշխարհային բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՍԾՏԿ	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
ՄԺԾԾ	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
մլն	միլիոն
մլրդ	միլիարդ
ՇԲՕ	Շտապ բժշկական օգնության
ՈՎՀ	Ոչ վարակիչ հիվանդություններ
ՊՄԳ	Պետություն-մասնավոր գործընկերություն
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՊՖԿ	Պետական ֆինանսների կառավարում
ՋՕԸ	Ջրօգտագործողների ընկերություն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՎԶԵԲ	Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և հետազոտությունների կենտրոն (EDRC)
ՓՄՁ	Փոքր և միջին ձեռնարկատիրություն
ՔՀԿ	Քաղաքացիական հասարակության կազմակերպություն
ՕՊԵԿ	Նավթ արտահանող երկրների կազմակերպություն
ՕՈՒՆ	Օտարերկրյա ուղղակի ներդրում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն